

Quebec, Canada Ch.

Transcribed to  
Imperial College &  
preserved by the  
British Library

891-99-0927 (inv. no.)

2-36

14 FEB 2011

ԱՃ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷՆՍԻՏՈՒՏ

Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Պ Ռ Ո Շ Յ Ա Ն Ը

Յ Ե Վ

Ժ Ո Ղ Ո Վ Բ Դ Ա Կ Ա Ն

Բ Ա Ն Ա Կ Յ ՈՒ Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

891.99

2-36

-6 NOV 2011

ՀԵՍՏ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99.092 Պոռթյան

Ղ-36 Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ  
այ.

6 | 90

**ՊՐՈՇՅԱՆԸ**

**Յ Ե Վ**

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ**


19 JUN 2013

1889

Քառ. խմբագիր՝ Մ. Կարապետյան  
Տեխ. խմբ. և սրբագրիչ՝ Հ. Մալիկյան  
Կանոնալ սրբագրիչ՝ Բ. Տոնյան



4853  
39



Գլավիկո № 6548. Գառվիք № 237. Տ/բաժ 3000.

«Մոսկովսկի հայաստան»-ի հրատ. տպարան

## ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ գրականութեան անցյալի պատմագիրներն  
ու քննադատները խոսելով Պոռշյանի մասին՝ համարյա  
բոլորն ել նշել են նրա գրվածքներում տեղ գտած  
Ֆուկլորային նյութերի փաստը, առանց, սակայն, տալու  
դրա քիչ թե շատ մանրամասն ուսումնասիրութիւնը:  
Այդ խնդրում դժբախտաբար հեռու չեն գնացել նաև  
ժամանակակից խորհրդային գրականագետները:

Ներկա աշխատութիւնը, վոր բաղկացած է յեր-  
կու առանձին մասերից, նպատակ ունի ա) տալու  
Պոռշյանի ոգտագործած ֆուկլորային նյութերի վեր-  
լուծումը (ներածութիւն) և բ) ի մի հավաքելու մեր  
հեղինակի գրվածքներում ցրված՝ հին Աշտարակի ժո-  
ղովրդական ստեղծագործութեան նմուշները (բնագիր):

Ա. Ղ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պոռճյանը 19-րդ դարի հայ այն ականավոր, իսկական ժողովրդական գրողներից է, վորոնք մոտիկից կապված լինելով աշխատավորական խավերին, բարձր են գնահատել նրանց ստեղծագործությունը:

Իր առաջին իսկ գրական գործի («Մոս և Վարդիթեր» վեպի) առաջաբանում խոսելով Մովսես Խորենացու Հայոց Պատմության մեջ պահպանված ժողովրդական բանահյուսության հնագույն պատասիկների մասին, մեր անվանի վիպասանը բացահայտում է իր գրական վերաբերմունքը «հասարակ ժողովրդյան» պարզ և անպաճույճ ստեղծագործությունների հանդեպ, վորոնցով «հեռառես ձերունին պարզ հայելվո մեջ» ցույց է տալիս «իրա նախնայց հոգվո պատկերը»: Նման համոզմունք ունենալով ժողովրդական ստեղծագործության մասին, Պոռճյանն իր անդրանիկ և հետագա բոլոր գրվածքներում, ավելի կամ պակաս չափով, ոգտագործում է հայրենի գավառի (Արարատյան նահանգ) ֆոլկլորի մի շարք նմուշներ: Այդ բանում նրան մեծապես ոգնում են այն լայն ծանոթությունները, վոր նա ուներ ժողովրդի կենցաղի, նիստ ու կացի, հավատալիքների և, մասնավորապես, բանահյուսության ընդգավառում: Ծնվելով և մեծանալով գյուղական ընտանիքում (աղքատ դերձակի տանը), այնուհետև իր կյանքի մի զգալի մասն անցկացնելով միևնույն միջավայրում— իբրև գյուղական ուսուցիչ, գրագիր, թեմական տեսուչ և



այլն—Պոռոջանը վաղ հասակից ամենորոյա շփման մեջ է յեղել ժողովրդական յայն խավերի հետ: Գյուղի ծերերից և պառավ հասակից նա ուսել է վերջիններին «վաղի առածները», ձմռան յերկար գիշերներին, գլուղական ողաներում՝ ունկնդրել նրանց պատմած հրաշապատում հեքիաթները, հնորոյա զբույժներն ու սրամիտ առակները: Գեղջուկ յերիտասարդներից ու աղջիկներից Պոռոջանը լսել ու սովորել է նրանց աշխատանքի ու սիրո ուրախութեան և թախծի մրմունջները՝ «հոտովելները», «հարբրանները», «Չլանգլուլումները», «գլուղացի մանուկներից՝ նրանց սիրած ու սերտած անթիվ խաղիկները...

Պոռոջանին ժողովրդական ստեղծագործութեան դանձերի հետ առաջին ծանոթացնողներից յեղել է հենց նրա հայրը, աշտարակցի դերձակ Ստեփանը: Իր վեպերից մեկում, խոսելով Այդր-գյուղի վերաբերյալ տեղացիների մեջ շրջող առասպելների մասին, Պոռոջանը գրում է. «Այդր-գյուղի վրա հնարած առասպելներն ավելի շատ են: Մինչև ցայսօր ել յես անտարբերութեամբ չեմ կարողանում հիշել Այդր-գյուղի անունը, վոր անձն չքստմնի: Յերբեք չեմ կարող մոռանալ, ինչպես իմ հանգուցյալ հայրը վսեմ է աղղու բառերով պատմեց ինձ Այդր-գյուղի բոլոր պատմութիւնները, յերբ վոր ձիու վրա ինձ յուր թարքն առած՝ գնում էյինք Սև ջրի գլուխը մովրովից ինձ համար արձակման վկայական ստանալու, վորով գնամ՝ ուսումնս առնեմ»<sup>1</sup>: Մի այլ տեղ անդրադառնալով իր գրվածքներում տեղ գտած ազգագրական և ֆոլկլորային հարուստ նյութերի ազդրուրների խնդրին, Պոռոջանը գրում է, վոր

1 Պ. Պոռոջան, Հացի խնդիր, Բագու, 1904 թ., էջ 28—29:

իրեն համար իրրեւ այդպիսիք յեղել են՝ «ի մանկութենէ մինչև վերջին տարիներս Աշտարակի՝ իմ ծննդան տեղի՝ ծերունիներից լսածներս»<sup>1</sup>: Մի յերբորդ տեղում խոսելով Ապարանի, Կողբի և Թալինի կողմերի դյուղերի այն ժամանակվա կառավարիչ (գործակալ) Հ. Քյանդարյանի մասին, վորի մոտ ինքը բավական յերկար ժամանակ վարել է քարտուղարի պաշտոն, Պոռոջանը խոստովանում է, վոր այդ պաշտոնը իրեն համար չի յեղել միայն նյութական վարձատրութեան ազդրուր, այլ զրա հետ մեկտեղ, միջոց և ավել նրան նաև «մտախից ծանոթանալու Արարատյան և Արագածոտն գավառների բնակիչների կյանքին ու բնավորութիւններին»<sup>2</sup>: Վերջինների տակ մեր հեղինակն, անշուշտ, հասկացել է ինչպես ժողովրդի նիստ ու կացը, հավատալիքներն ու սովորութիւնները, այնպես ել, զբանցից անբաժան, նրա բնավոր ստեղծագործութիւնը: Պակաս նյութ չի մատակարարել Պոռոջանին նաև նրա հետագա տարիների աստանդական կյանքը: Ապրուստի միջոց հայթայթելու նպատակով զանազան պաշտոններով ու զբաղմունքներով (ուսուցիչ, լուսանկարիչ, ամխտավաճառ...) շրջելով գավառից գավառ և քաղաքից քաղաք (Ապարան, Շիրակ, Նախիջևան, Որդուբաթ, Ագուլիս, Յերևան, Թիֆլիս, Բագու, Հաշտարխան) և մտախից շփուելով ժողովրդի տարբեր խավերի և հարևան ազգութիւնների հետ, Պոռոջանն ել ավելի հարստացրել է իր բանահյուսական պաշարը:

1 Պ. Պոռոջանց Կովածաղիկ, Տիֆլիս, 1878 թ., էջ 9.  
(Առաջաբան): Հմմտ. նույն տեղ, էջ 333:  
2 Պ. Պոռոջանց, Հուշիկներ, Ա. դիրք. Թիֆլիս, 1894 թ., էջ 209—210:

Դառնալով գրող, Պոռշյանն իր գրվածքներում  
լայնորեն ոգտագործում է տարիների ընթացքում իր  
ամբարած վերոնիշյալ նյութերը, ունենալով յերկու  
հիմնական նպատակ.

1. «Պարզ հայելվո մեջ ցույց տալ հասարակ ժողո-  
վրդյան հոգվո պատկերը», և

2. Ազատել «ժամանակի անհետացնող ժանիքնե-  
րից» Հայաստանի գլխավոր նահանգի (Արարատյան)  
«տեղական կյանքի պատկերը յուր բարբառի, առած-  
ների, ավանդությունների և ձեսերի հետ»<sup>1</sup>:

\*  
\* \*

Պոռշյանի «Մոս և Վարդիթեր», «Կովածաղիկ», «Հացի  
խնդիր», «Յեցեր», «Հունո», «Բղղե», «Շահեն» վերնա-  
գրերով մեծ վեպերում և «Մեր Սեչոն», «Աքցիզին»,  
«Միբել ազնեց Արզուլը» և այլ մանր պատմվածքներում  
ու գրույցներում տեղ գտած ֆուկլորային նյութերն ի-  
րենց ժանրային առանձնահատկությունների համեմատ  
կարելի չէ բաժանել չորս հիմնական խմբերի.

1. Ժողովրդական առածներ, 2. Ժողովրդական  
յերգեր, 3. աշուղական յերգեր և 4. Ժողովրդական  
ավանդություններ: Հիշյալ խմբերից յուրաքանչյուրն  
իր հերթին տրոհվում է մի քանի յենթատեսակների:  
Այսպես, առածների ընդհանուր խմբի մեջ մտնում են  
նաև ժողովրդական վրձերն ու ասացվածքները: Յեր-  
գերի խմբի մեջ սիրո, ծիսական և այլ յերգերի յեն-  
թատեսակները: Աշուղական յերգերի մեջ՝ աշուղական  
խողերի մի յերկու տեսակներ (մուխամբազ, բայաթի):  
Ժողովրդական ավանդությունների մեջ՝ զանազան ա-

1 Պ. Պոռշյանց, Հացի խնդիր. Թիֆլիս, 1880 թ., էջ 5:

առապելներ, գրույցներ, առականման պատմություն-  
ներ և այլն:

Բանահյուսական վերոնիշյալ չորս մեծ խմբերից  
ամենից ավելի աչքի չէ ընկնում առաջինը— ժողո-  
վրդական առածների բաժինը: Միայն «Մոս և Վարդի-  
թեր»-ի մեջ գրանց թիվը հասնում է շուրջ 150-ի,  
«Կովածաղիկ»-ի մեջ՝ 100-ի, «Հացի խնդիր»-ի մեջ՝  
150-ի, «Յեցեր»-ի մեջ՝ 50-ի, «Բղղե»-ի մեջ՝ 50-ի,  
«Հունո»-ի մեջ՝ 40-ի, «Շահեն»-ի մեջ՝ 30-ի, մանր  
պատմվածքների ու գրույցների մեջ՝ մոտ 40-ի. ընդա-  
մենը՝ մոտ 600-ի:

Ժողովրդական բառ ու բանի այդ հակերձ, բայց  
խիստ բովանդակալից ու դիպուկ նմուշների միջոցով  
Պոռշյանը մերկացրել ու խարազանել է աշխատավոր  
ժողովրդի արյունը ձեռք բազմաթիվ ու բազմա-  
տեսակ գյուղական ցեղերին: Վերջիններին մեջ նա  
նախ և առաջ նկատել ու մտրակել և առեւտրական  
կապիտալի դյուղական գործակալներին — Ջնուղ Աղա-  
ջանի, Բղղեյի և մյուսների նման մակարույձ չար-  
չիներին: Պատմելով այն մասին, վոր նահապետական  
կարգերի փոփոխման հետեանքով այժմ գյուղում կա-  
ռավարում են «հարուստ և խարզախ անչափահաս շո-  
ղոքորթները», Պոռշյանը գյուղի սպիտակամորուս ձե-  
րունիների բերանով ասում է. «Վա՛յ ինչ քաղաք, բա-  
ղավորդ մանուկ ա դառել» (ՀՊ. 110), և այնուհետև մի  
շարք ցայտուն առածներով ընդթաղում վերոնիշյալ  
«հարուստ ու խարզախ շողոքորթների» վարքագիծը—  
կաշառակերություն ու կաշառատվություն, թալան և  
այլն: «Դասարկ փայտից տուն չի հաշալ» (Բ. 230), ասում  
է, որինսակ, նրա «Բղղե» վերնագրով վեպի համանուն

հերոսը (չարչի), առաջարկելով գավառապետին ընդունելու իր աված կաշառքը: «Յերկու զոյի գրուխ մի պր-  
դրննում չեն յեփիլ» (Բ. 188), մտաբուժ և նույնը իր  
և իրեն մրցորդ խանութպան Չհուդ Աղաջանի միա-  
տեղ գոյության անհամատեղելիության մասին, գանե-  
լով, վոր իրենցից մեկն ու մեկը տեղը պետք է զիջի  
մյուսին, քանի վոր՝ «Աւխարճիք մի սանդուխտ է՝ մի-  
նր վեր է յելնում, մինր ցած իջնում» (Բ. 202):

Գյուղական ցեղերի վերոհիշյալ խմբի մեջ, աշխատա-  
վորությանը կեղեքելու, կեղծիքի ու թալանի իր ընդու-  
նակություններով բացառիկ տեղ է գրավում «Հացի  
խնդիր» վեպի հերոս, հոչակավոր Միկիտան Սաքոն:  
Պատմելով նրա գոփոզունակության, բացառիկ ճարպ-  
կության և նյութած անթիվ մեքենայութունների  
մասին, Պոռչանը հայտարարում է. «Թրու յե, քան չի,  
ամեն մարդի բան չի» (Հն. 42), և մի առ մի մեր-  
կացնում իր հերոսի բոլոր հոռի կողմերը: «Առ ու տու-  
րք ախպեր են, ընչակ տառ վոչ, առնել էլ չես» (Հն.  
47): «Ով չուտես, նա կուտես» (Հն. 573, 574): «Քո բան  
աջ ա, ով կուզի թող հաչա» (Հն. 65): «Ով ետր կլնի,  
յես փալանն եմ» (Հն. 482), ասում է Սաքոն գանա-  
զան առիթներով, գործածելով կաշառակերություն ու  
կաշառատվություն կենսական անհրաժեշտություն, հա-  
տարակական կարծիքն արհամարհելու, պայմաններին  
հարմարվելու այն իրեն համար նշանաբան դարձրած  
վերոհիշյալ և բազմաթիվ այլ ժողովրդական առածներ  
ու ասացվածքներ:

Ցեղերի յերկրորդ խումբը, վորի ներկայացուցիչ-  
ներին առածանար է արել Պոռչանն իր վեպերում,  
գա՛լ գլուզի ունևորությունն և — քեթթուղաները, ա-  
զաններն ու տանուակրները: Վերջիններս մեջ ամե-

նից ավելի աչքի յե ընկնում «Ցեղեր»-ի հերոս Բալա-  
սան աղան: «Ասում են, վոր գրան է հանձնված յեղել  
պատերազմից վնասվածներին մատակարարելիք նը-  
պատքը. ամենքին լի ու լի բաշխելոց հետո՝ իր գլուխն,  
էլ չի մոռացել. «Մեղը ծախողը մասը կլպսի» (Ց. 58).  
պատմում է Պոռչանը նրա «գործունեյության» առաջին  
ըրջանի մասին, և այնուհետև ձայն տալիս հենց իրեն:  
«Քանի՞ կուպեկի կտոնեմ հասարակաց դատաստանը,  
իմ բանն աջ է, թող ով կուզե հաչե» (Ց. 200), ասում  
է Բալասան աղան, յերբ նրան հիշեցնում են հասա-  
րակաց կարծիքի մասին: «Կկաղիլի, կուտի», «Յեկել է  
մեր մեծեկ, կսովորի մեր փեծեկ» (Ց. 218), ասում է նույ-  
նը՝ գլուխը հոպոպներով (նոր հովերով) լցրած իր  
կրտսեր յեղբոր մասին և այլն:

Ցեղերի յերրորդ խմբի մեջ են մտնում պետա-  
կան պաշտոնյաները — մովրով, նահանգապետ, գավա-  
ռապետ, զիվանատան ծանոյողներ, դատավոր, զրա-  
գիր, յասավուլ, քրիսվա ու զզիր: Իրանց անպատիժ  
արարքներն են՝ ձեծ, բանաարկություն, սպանու-  
թյուն, մթերքների գրավում և ալին: Ահա և նրանք՝  
առածների լույսի տակ: «Յեգր վեր ա ֆառում, ցակիցը  
հորք ուզում» (ՄՎ. 190), «Մանդն էլ ա իր ձեռի՞ն՝ պո-  
պո՞ն էլ» (Հն. 45), ասում են Պոռչանի վեպերի աշ-  
խատավոր գյուղացիները իրենց արյունը ծծող  
մովրովի մասին: Նույն կերպ նրանք բնութագը-  
րում են նաև տանուտիրոջն ու գյուղական դատավո-  
րին: «Ճանուցիտոջ վրա լիս վեր եկավ, ո՞վ սեսավ — գզիր»  
(ՊՂ. 236), «Կնուճը գլորվեց, խուփը գսավ» (Ց. 186),  
ասում է «Ցեղեր»-ի հերոսներից Մելիք Բաղալը՝ Ո.  
Գյուզի նորընտիր տանուտիրոջ և գյուղական թալան-  
չի դատավորների մասին: «Իստարկ փեխն թուն չի հա-

չալ» (ՀՆ. 262), մեր ըրբին ո՞վ մտիկ կտա, թե վոր աըլ-  
լոր դնանք ենտեղ ցցվինք», հորդորում ե տանուտերը  
Խեչանին, նոր դատավորին կաշառք — ընծաներով դի-  
մավորելու անհրաժեշտութեան մասին և այլն:

Աշխատավոր գյուղացիութանը զպնելու գոր-  
ծում, մովրովից, տանուտերից ու դատավորից հետ  
չեն մնում նաև գյուղական ստորին պաշտոնյաները:  
«Բողն ի՞նչ կուզի՝ մութ գիճեր» (ՀՆ. 272), ասում ե  
Պողոյանը նրանց մասին, վորոնք ոգովելով ուսու-  
թուրքական պատերազմի շնորհիվ տիրող խառնակ դը-  
րությունից, ել ավելի յեն թալանում աշխատավոր ժո-  
ղովրդին:

Պետական աստիճանավորներին զուգընթաց,  
Պողոյանն իր վեպերում, առածների ու ասացվածքնե-  
րի ոգնութեամբ քննադատում ե նաև հոգևոր պաշ-  
տոնյաներին — յեպիսկոպոս, վարդապետ, տերտեր, տի-  
րացու, վարոնք հանդես են դալիս գյուղի մյուս ցե-  
ղերի ու ցարական չինովնիկութեան հետ սերտորեն  
համագործակցած: «Առաջնորդը յես եմ, բակլեն խաւած  
եմ ցանոււ» (ՀՆ. 27), ասում ե գյուղի քահանան գոր-  
ծակալ հայրսուրբի մասին, ակնարկելով նրա կամա-  
յականութեանը՝ «հասը» «չհաս» հայտարարելու  
և այլնի առթիվ: «Բողը վոր տանու ըլի, յեզն յերիկովը  
դուրս կհաճի» (Կ. 74), ասում ե գյուղացիներից մե-  
կը իրենց գյուղի ջրոփակ» տեր Մելիքսեթի մասին,  
նկատելով թալանչի սարվազների հետ նրա ունեցած  
գաշնակցութեանը: «Թուղքը տու տուր, աքասիկ կուլ  
տուր», մի տուն շարական, մի կարճ ավետարան  
կարդում են ու փողը ծլնկացնում, (ՄՎ. 66), ասում ե

Պողոյանը, խոսելով գյուղական քահանաների պարտա-  
կանութեանը՝ «մասին և այլն»:

Այսպես տեղին և ժամանակին ոգտագործելով ժո-  
ղովրդական հակիրճ ու պատկերավոր առածները,  
Պողոյանը տալիս ե գյուղական վերոհիշյալ աշխարհիկ  
ու հոգևոր ցեղերի ու ցարական չինովնիկութեան շա-  
հագործման ու թալանի առարկա, նրանց ճիրանե-  
րում թիրտացող աշխատավոր ընչազուրկ գյուղացիու-  
թեան վողջ ծանր ու անմխիթար դրութեանը: «Վոր  
վի քեր քաւես, ինն հարյուր կարկասան վեր կրնկնի» (ՀՆ.  
21), «Թուղքիւն ամես՝ տարահոտ չի վեր ըլիլ» (ՀՆ.  
24), «Քաղցած հաճին են քնոււ» (ՀՆ. 273) և այլն:  
Իրեն բնական հետեանք այդ ծանր վիճակի, գյուղա-  
ցիութեան մեջ առաջ են դալիս և ձեւավորում դասա-  
կարգային ինքնագիտակցութեանը և միասնական  
պայքարի անհրաժեշտութեան գաղափարը: Ահա դրա  
մի շարք արտահայտութեանները, վոր այնքան ցայ-  
տուն ու պատկերավոր կերպով դրսևավորված են նույն  
ժողովրդական առածների ու ասացվածքների միջոցով:  
«Աղվեսը մարագումը ձագ ա հանել՝ մեր քազու հզու բյու-  
նիցն ա», «Ծառը գահգտս գնաց աստու մոտ կացնի ձեռի-  
ցը, վոր իրան կտում ա, ասեց՝ կորը քեզանից ա» (Յ.  
155). «Մենք վոր մի խոսքի ըլնինք, իրար տակ չիտրենք,  
իրարից չուղուլութուն (լրտեսութուն) չանենք,  
Ջաղացպանենց Բալոն մեզ ինչ կարա անել», ասում  
են «Յեցեր» վեպի աշխատավոր գյուղացիները մեկ մե-  
կու: «Բեկ զանգնի, գերան կկոտրի» (Յ. 80), ասում ե  
նրանցից մեկը, ի պատասխան յուրայինների տըր-  
տուն ջի, ուզոված իրենց հարստահարող ցեղերի դեմ, և  
այլն:

Կապիտալիզմի դեպի գյուղ կատարած ներարշա-  
վի հետեանքով ստեղծված հասարակական-տնտեսա-  
կան նոր հարարերություններին Պոռշյանը հակադը-  
րում է մի քանի տասնամյակ առաջ գյուղում գոյու-  
թյուն ունեցող նահապետական կարգերը: «Սրանից  
քսան, կամ քսան ու հինգ տարի հառաջ,—գրում է նա,—  
լիմ լավ միտքս է, մեր գյուղերումը յերկու դրացի մի  
տան պես էլին ապրում. մի առած ունեյին, վոր պատ-  
գամի նման ընդունված էր ամենքիցը. «Փոխը սխալ  
ուն ապահել» (ՀՆ. 205); Այս առածի սուրբ նշանա-  
կությունը ամենքին լավ հայտնի յեր, պատեպատ հա-  
րեվաններն յեղորը նման միմյանց կարելքին հասնում  
էլին»: Իսկ աշխատավոր գյուղացիության արյունը ծծող  
վամպիրներին Պոռշյանը հակադրում է «հալալ աշխա-  
տանքով ապրող», «սիրտը լեն ոայաթին», վորի սի-  
բած ու գործածական առածներն են՝ «Ռահաթի սիրսը  
լեն կրլնի» (ՀՆ. 266), «Ով աբխասի, նա կուսի» (ՍՎ. 7),  
«Աղ ու հաց, սիրսը բաց» (Հն. 32), «Մոսիկ հարեվանը լավ  
է հեռու բարեկամիցը» (ՀՆ. 129), «Մարգամիջի մարգս  
րլի, հագար բուման պարսսս րլի» (ՀՆ. 187), «Անաս-  
ված սեղը կաց, անարխա (անողնական) սեղը մի կենալ»  
(Հն. 19), և այլն, և այլն:

Առածների ու ասացվածքների միջոցով Պոռշյանը  
տալիս է նաև յերբեմնի նահապետական հայ գյուղացու  
հայացքներն ու դատողությունները՝ իր աշխատան-  
քային առոյրայի (ժողովալ բանին ձյուն է յեկել» (Բ. 98),  
«Գյահկիր (համառ) ձիս քարվան յի կսրի» (Յ. 306),  
«Մի տան շերտի վոր յերկու սանդկան ձեռին րլնի՝ տուս

բածան կրլնի» (ՍՎ. 4), կենցաղի ու սովորութեան  
նորմաների՝ («Աղջիկը վոր կա՝ տուս յե, վոր կոսր-  
վեց, յի կարկասվիլ» (Հն. 165), «Աղջիկը վոր կա՝ անկսել  
ձմեռուկ է» (ՀՆ. 157), «Բեհինն նեանածի բերանն ա»  
(ՀՆ. 202), «Սուվրենն քցած՝ բանն անիծած» (Հն. 85),  
աշխարհայացքի ու հոգեբանության՝ («Ճակասի գրվածք  
յի ջնջիլիլ» (ՀՆ. 602), (Կ. 478), «Արյունն արնով չեն լը-  
վանալ» (Բ. 337), հավատալիքների ու հասկացողու-  
թյունների՝ («Վաս հալբալը տուս սեղ կնասնի» (ՀՆ.  
406), «Փորձանքի կես նալբից դառնալը խելոխալուն  
ա» (ՀՆ. 426), «Հարսանիքն ու մահեմիքն արիպեր են»  
(ՀՆ., 591), «Շիսակ խոսքը հանալով կանեն» (Բ. 96),  
«Հասկացող վորդին հոր աջու աչին է» (ՀՆ. 290) և այլ-  
նի մասին:

Սակայն, ժողովրդական առածներն ու ասացվածք-  
ները միայն իրենց բովանդակությամբ չեն, վորը գրա-  
վել են Պոռշյանի ուշադրությունը: Դրանց միջոցով  
նա հաջողությամբ լուծել է մի այլ կարևոր խնդիր  
ևս: Իր վեպերի առանձին գլուխների ու հատվածնե-  
րի մի զգալի մասը նա վերնադրել է առածներով ու  
ասացվածքներով, վորոնց մեջ խտացած ձևով արտա-  
հայտել է ավյալ գլխի կամ հատվածի հիմնական գա-  
ղափարը: Հիշյալ վերնագրերը հաճախ ավելի հաջող  
են, քան իրեն՝ Պոռշյանինը: Առաջինները վոչ միայն  
ավելի սեղմ են ու հակիրճ, այլև ավելի պատկերավոր են  
ու հնչյուն, և դա շնորհիվ բանաստեղծական խոսքի  
այն առավելությունների (ոիթմ, հանգեր, գեղարվես-  
տական համեմատություններ . . .), վոր ունի ժողո-  
վրդական բառ ու բանն ընդհանրապես և առածներն

ու ասացվածքները՝ մասնավորաբար: Մեր ասածը հաստատելու համար բերենք մի քանի որինականեր:

Պոռոյանի ինֆնուրույն վերնագրերից. 1. «Յորենի շարունակութունը կամ Մաշաղի Ռամազանը» (ՀՆ. 329), 2. «Ստվերը կամ անկոչ հյուր» (ՀՆ. 449), 3. «Քննիչը բանտի խորքերումը» (ՀՆ. 568), 4. «Սոսակցության աղը» (Յ. 23), 5. «Տղամարդի հոգին» (Յ. 38) 6. «Ուլթա կամ Վարդ Մանուշակ» (Կ. 26), 7. «Տիկին և աղախին կամ մայր ու աղջիկ» (Կ. 89), և այլն:

Ժողովրդական առածներից ու ասացվածքներից վերցված վերնագրեր.— 1. «Պատիկ ա ու ճատիկ ա» (ՀՆ. 306), 2. «Գող սիրտը դող» (ՀՆ. 157), 3. «Հարսանիքն և մահնիքն ախպեր են» (ՀՆ. 591), 4. «Ես ամպը կարկրտի ամպ ա» (Կ. 170), 5. «Հացը հացարարին տուր, մինն ելավելի» (Կ. 205), 6. «Կաշառքը մութ տեղը լույս կտա» (Կ. 543), և այլն:

Քացի վերոհիշյալից, առածներն ու ասացվածքները, ժողովրդից վերցված պատկերավոր արտահայտությունների, նմանությունների ու համեմատությունների, վտճերի, մակդիրների ու ածականների հետ միասին, հարստացրել ու ճոխացրել են Պոռոյանի լեզուն, համ ու հոտ հազորդել նրա վոճին:

\*  
\* \*

Առածներից ու ասացվածքներից հետո, իրենց քանակով Պոռոյանի ոգտագործած Փոլկլորային նյութերի մեջ յերկրորդ տեղը բռնում են ժողովրդական յերգերը: Այստեղ առաջին հերթին աչքի յեն ընկնում ծիսական յերգերն իրենց մի քանի յենթատեսակներով: Իր «Սոս և Վարդիթեր» վեպում, որինակ, նկարա-

պրելով ծաղկաղարդի տոնակատարությունը գյուղում, մեր հեղինակը մեջ և բերում գեղջուկ մանուկների ճոճանակի յերգը (ՍՎ. 27): Նույն վեպում մանրամասն նկարագրելով համբարձման տոնի հետ կապված վիճակահանության հին հեթանոսական սովորություններն ու ծեսերը, նա տալիս և ժողովրդական վիճակի յերգերի բազմաթիվ նմուշներ, վորոնք յերգում են գյուղացի աղջիկներն ու հարսները հիշյալ տոնի ժամանակ: Այդ յերգերը բաժանվում են չորս հիմնական խմբերի.

1. Ծաղկափաղի յերգեր, վորոնք յերգվում են համբարձման տոնից մի շարաթ առաջ, ծաղիկներ հավաքելիս:

2. Փարչի գովի—յերգեր, վորոնք զուգակցում են վիճակահանության փարչի գովքին:

3. Վիճակահավաքի յերգեր, վոր ասում են գյուղացի աղջիկները մինչև համբարձման հինգ յարթին՝ տնե տուն շրջելով վիճակներ հավաքելիս:

4. Ծաղկահանի յերգեր, վոր յերգում են նույնք՝ բուն վիճակահանության հանդեսի միջոցին:

Ժողովրդական վիճակի յերգերի վերոհիշյալ չորս խմբերն, իրենց բովանդակությամբ, ըստ մեծի մասին, սովորական սիրու յերգեր են, վորոնց մեջ կարևոր տեղ և զրավում նաև ծաղիկների գովքը: Զանազան ծեսերի ու տոների (ծաղկազարդ, համբարձում և այլն) հաճախ բավական մանրամասն և ազգագրական տեղեկություններով խճողված իր յերկարապատում նկարագրությունները մեջ ընդ մեջ զարդարելով զբանց զուգակցող ժողովրդական գողտրիկ յերգերով, Պոռոյա-

նը թարմություն և բազմազանություն և հաղորդում  
իր պատմվածքին:

Ծիսական յերգերից հետո Պոռշյանի գործերում  
ուշադրություն են դրավում հատ ու կենտ թովչանքի  
յերգերը: Այսպես որինակ, մի տեղ նկարագրելով  
ժողովրդական բժշկության մի տեսարան, մեր հեղի-  
նակը բերում է դրանցից մեկը՝ չար աչքի դեմ (Բ.  
46): Մի այլ տեղ պատմելով յերաշտի ժամանակ անձ-  
բեմ բերելու համար դուռը գլխից կողմից գործա-  
դրվող զանազան թովչանքների ու կախարհություն-  
ների մասին, Պոռշյանը տալիս է նման ղեպքերում  
գործածական «Նուրին»-ի յերգի մի վարիանտ (ՄՎ., էջ  
97) և այլն:

Յեթե ծիսական յերգերի տեղին ոգտադործումը  
թարմություն և բազմազանություն և մտքել ժողո-  
վրդական տոների ու ծեսերի նկարագրություն-  
ներում, ապա թովչանքի յերգերը, վորոնք արտա-  
ցուում են իրենց մեջ նախնական յերկրադործի  
հավատքը դեպի խոսքի կախարդական զորությունը և  
վորոնց դերն է՝ կանխել վորևե դժբախտություն կամ  
բնության վերահաս արհավիրք (հիվանդություն,  
յերաշտ և այլն), ավելի դուռեղ ու առավել ախլիկ են  
դարձնում ժողովրդական բժշկության և թովչանքի  
նկարագրությունները:

Ժողովրդական յերգերի վերահիշյալ յերկու տե-  
սակներից բացի, Պոռշյանի մոտ կան նաև մի քանի  
խառը բովանդակությամբ յերգեր, ցրված նրա յերկե-  
րի տարբեր եջերում: Մի տեղ, որինակ, խոսելով Աշ-  
տարակում ամառոց և Բաղդադում ձմեռոց կուռնկների  
մասին, մեր հեղինակը բերում է աշտարակի յերկա-

ների յերգը, նվիրված դրանց չվին, վորի մեջ արտա-  
հայտված են նրանց բուռն ցանկությունները յեկող  
տարվա հաց ու պտղի առատության, ցավ ու չոռի  
պակասության և այլնի առթիվ (Կ. 199): Մի այլ  
տեղ իր թոռնիկին որորոց գյուղացի կինը յերգում է  
ժողովրդական որորոցի յերգերի նմանությամբ Պոռ-  
շյանի հորինած յերգը («Նանիկ»), վորի մեջ դրսևվոր-  
ված են այդ կնոջ լավագույն ցանկություններն իր  
թոռնիկի ազագայի մասին (ՄՎ., 138) և այլն:

Կանաչ մարգագետինները զարդարող գույնզգույն  
վայրի ծաղիկների նման, ժողովրդական յերգերի այդ  
հատ ու կենտ նմուշները գեղազարգում են մեր հեղի-  
նակի վեպերի տարբեր եջերը:

\*  
\*\*

Ժողովրդական ստեղծագործության յերրորդ բա-  
ժինը, վորի արձագանքները մենք գտնում ենք Պոռ-  
շյանի յերկերում, դա՛ ժողովրդական և աշուղական յեր-  
գերի նմանությամբ մեր վիպասանի հորինած վոտա-  
նավորներն են, տեղ գտած գլխավորաբար նրա  
«Սոս և Վարդիթեր» անդրանիկ վեպում: Մի հիմնա-  
կան առանձնահատկություն, վոր ունեն հիշյալ յեր-  
գերը և վորով նրանք տարբերվում են վերևում հիշ-  
ված նյութերից, դա՛ նրանց հեղինակի խնդիրն է:  
Մինչդեռ առաջին գեպքում մենք գործ ունեյինք ժո-  
ղովրդական անանուն բանաստեղծությունների հետ,  
յերկրորդ (ներկա) գեպքում իրրև այդպիսին հան-  
դես է գալիս ինքը՝ Պոռշյանը: Հիշատակված ստեղծա-  
գործությունները բոլորն էլ նրա սեփական հորին-

վածքներն են, զրված ժողովրդական «Չանդյուլումներին»  
և աշուղական խաղերի մոտիկ նմանությամբ:

Առաջին խմբի (ժողովրդականի նմանությամբ)  
հորինվածքներից են՝ «Սոս և Վարդիթեր» վեպի՝ եջ  
155—156, 231 և «Սոխակ Հայաստանի» յերգարանի՝  
1876 թ. Գ. հտ. 181—182-ում գետեղված՝ «Միրելի ջան,  
հեռացար», «Մի դարդ ունիմ, դարման կուզեմ»,  
«Քուչումը ման ես գալի» սկսվածքներով սիրային  
բովանդակությամբ յերգերը:

Յերկրորդ խմբի (աշուղականի նմանությամբ)  
ստեղծագործություններից են՝ նույն «Սոս և Վարդի-  
թեր»-ի՝ եջ 6—7-ը, 53—54, 130—131, 162-ում գե-  
տեղված՝ «Արի, արի, կաչաղակ», «Ինձ երում ա են  
սերը», «Բան եմ ասում», «Ընչանք յե՞րը» սկսվածք-  
ներով սիրային բովանդակությամբ կիսաաշուղական  
յերգերը: Քաջ ծանոթ լինելով թե առաջին (ժողովրդա-  
կան) և թե յերկրորդ (աշուղական) տեսակի յերգերի  
հորինման արվեստին, Պոռչյանը վերջիններին նմա-  
նությամբ մեծ հաջողությամբ ստեղծել է իր սեփա-  
կան խաղերը: Ամենից առաջ այստեղ նա հարազա-  
տությամբ վերարտադրել է վերոհիշյալ յերկու տեսա-  
կի ստեղծագործությունների յուրահատուկ լեզուն ու  
վոճը: Բուն ժողովրդական և աշուղական յերգերի  
լեզվի ու վոճի նման, Պոռչյանի յերգերն ևս զրված են  
կենդանի խոսակցական լեզվով, համեմված բազմաթիվ  
ժողովրդական մակդիրներով, ածականներով:

Իրենց տաղաչափական արվեստով ել Պոռչյանի  
վտանավորները համեմատ են ըուն ժողովրդական և  
աշուղական յերգերին: Իրանք մոտիկից հիշեցնում են

7—8 վանկանի տողերով, տարբեր հատածներով  
(նույնահանգ, հաջորդարար զուգահանգ և այլ կաղ-  
մությամբ) հայ ժողովրդական քառյակները («Չան-  
դյուլումներ», «Մանիներ»), և Մերձավոր Արևելքի,  
նաև հայ աշուղների, կողմից այնքան սիրված մու-  
խամրազ կոչվող աշուղական խաղերը (14 և 15 վան-  
կանի, քառահատած, շեշտական, վերջին տողերի  
կրկնվող վերջավորությամբ):

Հիշյալ յերգերի միջոցով Պոռչյանն ավելի հա-  
ջող է զրսեվորել իր յերիտասարդ հերոս-հերոսուհի-  
ների ապրումներն ու հույզերը, բացահայտել նրանց  
սիրտն ու սերը, տալով այս տեսակետից ուշադրալ  
բանաստեղծական նկարագրություններ:

Մի քանի խոսք ել մեր վիպասանի գործերում  
տեղ գտած ժողովրդական ավանդությունների ու  
զրույցների մասին: Այս կամ այն վայրի, տեղի (բերդ,  
լիճ և այլն), ժողովրդի բնավորության և այլնի  
նկարագրերը տալիս՝ Պոռչյանը, ոգտվելով առիթից, մեջ  
է բերում այդ առթիվ գյուղացիների մեջ յեղած և  
սերնդե սերունդ, բերանից բերան բանավոր կերպով  
ավանդվող առասպելներն ու զրույցները: Մի տեղ,  
որինակ, խոսելով Այլրգյուլի մասին, նա տալիս է  
վերջինի մեջ բնակվող հրեղեն ձիերի՝ Գյորոզու  
Ղոթթի, Արագածի կատարի լճի ու Այլր-գյուլի ջրերի  
մեջ յեղած կապի վերաբերյալ ժողովրդի մոտ յեղած  
յերկու տարբեր ավանդություններ (ՀՊ. 28—29): Մի  
այլ տեղ նկարագրելով կարբեցիների խորամանկու-  
թյունն ու ճարպիկությունը, Պոռչյանը մեջ է բերում  
նրանց բնավորության այդ կողմի մասին պատմվող



յերկու փոքրիկ զրույցներ (Կարբեցու և սատանայի վեճը. Բ. 18—19, 94—97) և այլն:

Ժողովրդական ավանդությունների ու զրույցների ոգտագործումը հարստացրել ու հետաքրքրական է դարձրել Պոռշյանի գրվածքներում պատկերված տեղագրական-աշխարհագրական միջավայրը, ժողովրդի հավատալիքները և այլն:

\*  
\* \*

Պոռշյանի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրությունը բացեց մեր առաջ ծանոթությունների այն դաշտը, վոր ունեցել է նա ժողովրդական բանահյուսության բնագավառում: Մենք պարզեցինք, թե ինչպես մեր հեղինակը մանկական հասակից մինչև իր կյանքի վերջին տարիները մտտիկ շփման մեջ լինելով ժողովրդի հետ (զյուզում թե քաղաքում), հետզհետե հարստացրել ու ձոխացրել է իր ֆուլկլորային սլաշարը: Տեսանք, թե ինչպես, լավ ըմբռնելով ժողովրդական բանահյուսության արժեքն ու արժանիքները, հատկապես ժողովրդի կյանքը պատկերող գրվածքում այն ոգտագործելու կարևորությունը, Պոռշյանն իր վեպերում լայն տեղ է հատկացրել դրան:

Ամփոփենք այժմ այդ սոթիվ մեր արած դիտողությունները:

Ժողովրդական բանահյուսության ոգտագործումը՝

1. Ավելի ժողովրդային է դարձրել Պոռշյանի լավագույն գործերը («Սոս և Վարդիթեր», «Հացի խնդիր», «Յեցեր» և այլն):

2. Առավել ցայտուն ներկայացրել 19-րդ դարի առաջին կեսի հայ գյուղի հասարակական-տնտեսական կյանքի և դասակարգային փոխհարաբերությունների ղեղարվեստական պատկերը:

3. Կենդանի ու գունեղ ցուցադրել նույն գյուղի աշխատանքային առօրյայի, առտնին կենցաղի, նիստ ու կացի, ծեսերի ու հավատալիքների նկարագիրը:

4. Հարստացրել է մեր վիպասանի լեզուն, ձոխացրել ու պատկերավոր դարձրել նրա վեճը, սահուն ու գրավիչ՝ պատմվածքը:

Հիմնականում հարագատ ֆալով իր ոգտագործած նյութերի բովանդակությանը, Պոռշյանը դրանով իսկ փրկել է կորստից հին Աշտարակի ժողովրդական բանահյուսության մի շարք արժեքավոր բեկորները:

Այս տեսակետից միանգամայն հասկանալի է բնական է այն փաստը, վոր մեր անցյալի զրականության դեմոկրատական հոսանքի յերկու պայծառ ներկայացուցիչները՝ հեղափոխական հրապարակախոս Մ. Նալբանդյանն ու դեմոկրատ գրող Դ. Աղայանը՝ Պոռշյանի ստեղծագործությունների կարևոր արժանիքներից մեկը համարել են զրանց ժողովրդական բանահյուսության նմուշներով համեմված լինելու հանգամանքը:

Այսպես, իր նշանավոր «Կրիտիկա»-ում, նվիրված «Սոս և Վարդիթեր»-ի վերլուծմանը, Մ. Նալբանդյանը նրա «այնքան շատ և անհակառակելի» արժանավորությունների մեջ մեծապես զնահատում է նաև ժողովրդական բանահյուսության տեղին և հաջող կերպով ոգտագործված լինելու մոմենտը: Ահա թե ինչ է գրում նա իր հոդվածում. «Ար-

զո հեղինակը, հետևելով պ. Աբովյանցի ուղղության, իր բովանդակ գործի մեջ միշտ աչքի առաջև ունեցել է զործ դնել ազգային առածներ, ասացածներ: Մենք լիասիրտ շնորհակալություն ենք հայտնում մեր հեղինակին: Բացի սորանից, «Սոս և Վարդիթեր»-ի մեջ շատ կան սիրուն ձևեր և վոճեր, վորոնք գրեթե ամեն տեղ գործ են անվում ազգի մեջ»:

Քիչ անց, խոսելով նույն վեպում տեղ դրած ժողովրդական յերգերի մասին, Նալբանդյանն ավելացնում է. «Պ. Պոռյանցի վոտանավորքը մեծ հարազատություն ունին Արարատյան աշխարհի և տե՛՛ տեղ ել ամբողջ ազգի վոգու և ձևի հետ», և իբրև նմուշ մեջբերելով էջ 74-ում գետեղված «ջանգյուլումբ», շարունակում է. «Շատերը կան նույնպես ազնիվ, նույնպես գեղեցիկ, բայց մենք ուղում ենք միայն «Նանիկը» մեջ բերել (խոսքը ժողովրդական որորոցի յերգերի նմանությամբ հորինված, Պոռյանի՝ վերջ մեր հիշատակած յերգի մասին է—Ա. Ղ.), ուր հայ պառավի վոգին ու սիրտը ամեն հարազատությամբ թափել է հեղինակը»:

«Սոս և Վարդիթեր»-ի հիշյալ կողմը (ժողովրդական բանահյուսության օգտագործումը) բարձր է գնահատում նաև Աղայանը: «Վորքան շնորհակալ պետք է լինեն մեր ապագա սերունդները Պոռյանից, վոր հենց ազգային յերգերին ու սովորություններին և նվիրել իր աշխատությունը»<sup>1</sup>,— գրում է նա:

<sup>1</sup> Ղ. Աղայան, «Պերճ Պոռյանի և նրա «Սոս և Վարդիթերի մասին» տես. «Սոցիալ», 1888 թ., № 8—9: ]

<sup>1</sup> Ղ. Աղայան, «Պերճ Պոռյանի և նրա «Սոս և Վարդիթերի մասին» տես. «Սոցիալ», 1888 թ., № 8—9

ԲՆԱԳՐԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ

ՎԻՃԱԿԻ ՅԵՐԳԵՐ

(«Ջանդյուլումներ») )

1

Խնձոր ունիս կժած ա,  
Ջան դյուլում ջան, ջան.  
Չորեք կողմն երծաթած ա,  
Ջան ծաղիկ, ջան, ջան.  
Ախպերս ուզեց չի տվի,  
Ջան դյուլում, ջան, ջան,  
Ասի յարի զրկած ա,  
Ջան ծաղիկ, ջան, ջան:

2

Այ տղա, հիւ անիւ տուր—  
Մատնաչափ դիր անիւ տուր,  
Ինձնից ել քեզ ճար չի կա—  
Քաքուղ վեր անիւ տուր:

3

Յես աղջիկ եմ, ալ կուզեմ—  
Բարակ միջկիս շալ կուզեմ.  
Յերբ յես եկա ձեր տունը—  
Վասկին սարեսար կուզեմ:

4

Կիրակի ել պաս կըլնի՛ր—  
Երծաթից լավ թաս կըլնի՛ր.

Վորդիդ մեռնի վարդապետ—  
Սիրածը չհաս կըլնի:

5

Քանաքեռ բարձր տեղ ա —  
Ջուրը հիվանդին դեղ ա,  
Սիրած սիրածին չեն տալ —  
Ես ի՞նչ անիրավ գեղ ա:

6

Են սարը բարձր սար ա —  
Տակը գնջլած քար ա,  
Յես քեզ թաքուն սիրեցի —  
Բաս ո՞վ արավ աշկարա:

7

Իմ յարն ինձ յար պտի —  
Ջեռումը Փանար պտի.  
Իմ յարի կաննած տեղը —  
Մեկ չինարի ծառ պտի:

8

Ա՛յ տղա, դու հաղար ըլնիս —  
Իմ ախպոր սաղար ըլնիս.  
Թե ինձանից ջոկ յար բռնես —  
Դու սրտապատառ ըլնիս:

9

Քաքուլիդ կալին մեռնիմ —  
Յերեսիդ խալին մեռնիմ.  
Լսել եմ կարդացող ես —  
Մաղմոսիդ ծալին մեռնիմ:

10

Ամպել ես ամպի նման —  
Շաքար ու դանդի նման.

Իմ նանն ինձ վոնց ա պահել —  
Ծալած դյուլբանդի նման:

11

Կաննել եմ ախա բախա —  
Շավազուս տուտը կախ ա.  
Շեկ տղա, կարմիր աղջիկ —  
Թող բռնենք իրար յախա:

12

Ամպել ա ձուռն չի դալիս —  
Մթնել ա տուռն չի դալիս.  
Ես անտեր բարձի վրա —  
Առանց յար քուն չի դալիս:

13

Վոչխարն արել եմ բակը —  
Դեմ տվել սելի ակը.  
Ով իմ սիրածս առնի —  
Զի վելի դլիսի թագը:

14

Կաքավը կաննել ա քարին —  
Կտուցը լիքը արին.  
Մի աղլուխ վարդ եմ քաղել —  
Ղրկել իմ ախպոր յարին:

15

Իմ միջկինս քամար ա —  
Քու ունքերտ կամար ա.  
Ա՛յ տղա, ի՞նչ ես միտք անում —  
Իմ ջանս քեզ համար ա:

16

Մտիկ տվեք են դադին —  
Պուտուտուրիկ բողաղին.

Հողն են հորն ու մոր գլխին —  
Աղջիկ կըտա չորմաղին:

17

Կաննել եւ շարձը սարին —  
Չուխիդ նախշու կարին.  
Հետու տեղից ես գալիս —  
Ո՛ւր ա բերածդ բարին:

18

Քաջուլի թափ ես տալիս —  
Չեռներդ ծափ ես տալիս.  
Նորը եքուց քցելով —  
Ամեն որ խափ ես տալիս:

19

Գութանը հաց եմ բերել —  
Բերանը բաց եմ բերել.  
Տես քեզ ի՞նչքան եմ սիրում —  
Ձկնով տապկած եմ բերել:

20

Կանանչ խառեն քիսացու —  
Կարմիր կովը մսացու.  
Յես քո հորը հարսնացու —  
Դու իմ մորը փեսացու:

21

Յերթկի վրեն թինդնել ես —  
Յերթկի կոճը բռնել ես.  
Հերս քեզ աղջիկ չի տալ —  
Ափսոս քունդ կտրել ես:

22

Համբարձում յայլա, յայլն ջան, յայլն,  
Համբարձումն յեկել ա, մեր բաշին կաննել,

Հաչակ ա գցել մեկ մեկի վերա,  
Մինը տակեանց, մինը վերեանց.  
Քա խաթուն Գյուլաղ, հուշարդ երեաց,  
Համբարձում յայլն, յայլն ջան, և այլն:

23

Քու սիրուդ ինձ կսպանեմ —  
Աղջի, քու չարը տանեմ.  
Դու իմ խոսքիս կամ արի —  
Նանիդ ուղի կանեմ:

24

Ձիթ մինթանեդ հնամաշ ա —  
Ունքերդ դալամքաշ ա.  
Աղջիկ, ի՞նչ ես միտք անում —  
Իմ ջանս քեզ փեշքաշ ա:

24

Աղջի, ի՞նչ լավ մազ ունիս —  
Սոխակի փարվազ ունիս.  
Խոսքիս ջուղար չես տալիս —  
Ի՞նչ շատ եշխ ու նազ ունիս:

26

Մազերդ վոլորվել ա,  
Աչքերդ բոլորվել ա.  
Իրեք որ ա չեմ տեսել —  
Իմ սիրտս մոլորվել ա:

27

Ամպել ես ամպի տակին —  
Շունկդ ծնկանս տակին.  
Յես քեզ ի՞նչ տեղ սիրեցի —  
Խնձորի ծառի տակին:

Յարս զրկել եմ թթի—  
Աղջի, քու վիզդ փթի.  
Վորտեղ խաղալու գնաս—  
Ման արի յարդ քթի:

29

Պատի աղջիկ, զալում ես—  
Մազերդ սղալում ես.  
Գեղարդի զաղարին դաս—  
Միսն վոսկորից հանում ես:

30

Պատի աղջիկ, լավ աղջիկ—  
Ունիս մենձ համբավ, աղջիկ—  
Իմ քեզ ծածուկ սիրելիս—  
Ի՞նչու ելավ, չավ, աղջիկ:

31

Աղջի, դու շատ սառն ես—  
Արարատյան դառն ես.  
Խիստ ճարտար լեզու ունիս—  
Սոխակի բարբառ ունիս:

32

Ջուրը կը գա քարիցը—  
Աղջիկ, դու կը գաս սարիցը.  
Մերս ի՞նչպես հովանա—  
Գեղպես սոխակ ճարտարիցը:

33

Ես գիշեր լուսնակ գիշեր—  
Ձինն յեկել գետինը նախշել.  
Դռնդ դեմ արա պաչեմ—  
Կեռ ունքեր, կարմիր թշեր:

Սիրել եմ սերն յերեսին,  
Ռեհան թերն յերեսին,  
Ով իմ սիրածն ինձ չի տա,  
Ասուռ կրակն յերեսին:

35

Յերթիկ յերթիկ բռնել ես,  
Յերթկա տակին կռնել ես.  
Իմ հանը քեզ աղջիկ չի տալ,  
Անուշ քունդ կտրել ես:

36

Մաղիկ ունիմ, ալա ա,  
Ալա չի, ալվալա ա.  
Յար բռնիլը լավ կըլի,  
Բաց թողալը բալա ա:

37

Եսոր ուրբաթ ա, պաս ա,  
Մոցինդ երծաթե թաս ա,  
Հոգիդ դատի, վարդապետ,  
Խի՞ իր ասում չհաս ա:

Մ.Վ. 104 - 114:



ԿՈՌԻՆԿՆԵՐԻ ՅԵՐԳԸ

Բարով գնաք, բարով գաք,  
Վասնեքդ խերով ըլի,  
Յով ու չոռը պակաս ըլի,  
Հացն ու պտուղը շատ ըլի,  
Հարսանիքն ախպորս ըլի,  
Մահենիքը տատինս ըլի:

Կ. 199.

Ն Ո Ւ Ր Ի Ն

Նուրին նուրին եկել ա,  
Աջբա հուրին եկել ա,  
Շիլա շակիկ հաքել ա,  
Կարմիր գոտիկ կապել ա:

Յեզ բերեք պորտը քսենք,  
Ջուր բերեք զլիւին ածենք,  
Մեր նուրինի փայլը սփեր,  
Ուտենք, խմենք, քեֆ անենք:

Ս. Վ. 97—98:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ

ՅԵՎ

ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

Ա

- Ադուավի ձենը վոր աստված լսեր, վարդավառին  
 ձյուն կը դար. (Յ. 307):
- Ախ աստված, փլավն համ ա տալիս, իշտանն ում.  
 (ՀՆ. 172):
- Ահը շատ ե (վեր ե), քան թե (քան) մահը. (Կ.  
 222, Յ. 183, Հն. 289):
- Ահի տարին քնչ եյիր, թե մահի տարին քնչ  
 ըլիս. (ՀՆ. 17):
- Աղ ու հաց, սիրտը բաց. (Հն. 32):
- Աղեն ասաց՝ քշի ձորը, քշի ձորը (Իրնկ. առած.  
 Կ. 242):
- Աղջիկ բերող մոր սրոցքը կրակ ընկնի. (ՍՎ. 91):
- Աղջիկը վոր կա՝ անկարիլ ձմերուկ ա. (ՀՆ. 157,  
 Յ. 256):
- Աղջիկը վոր կա՝ շուշա յե, վոր կտարվեց, չի  
 կարկատիլ (Հն. 165):
- Աղվեսը մարագումը (մեր մարագումը) ձուտ ա  
 (ձագ) հանել՝ մեր թագու հղությունիցն ա. (Յ.  
 155, ՀՆ. 262):
- Աղքատ՝ հպարտ. (Ն. 34):
- Ամառը մարդս խանի թաղի ըլի, ձմեռը՝ վարդա-  
 պետի կատու. (Կ. 423):
- Ամեն բանի սկիզբն ե դժվար. (Շ. 140):
- Ամեն ժամանակ տատը գաթա չի ուտիլ (ՄԱ. 40):
- Ամեն մարդի չվանով հորը չեն մտնիլ. (ՍՎ. 45)

- Ամեն շապիկ մարմնին կոած է. (Հն. 238):  
 Ամեն սոսկազոց վոսկի չէ. (Հն. 162):  
 Անաստված տեղը կաց, անարթա տեղը մի կենալ.  
 (Հն. 91, Հն. 332):  
 Անհավատ բանին մի հավատալ. (Հն. 368):  
 Աշխարհքիս մալն (գանձն ու հարստութունը)  
 աշխարհքուժը պտի մնա. (Հն. 96, Բ. 248):  
 Աշխարհքս առ ու տուր է. (Հն. 255):  
 Աշխարհքս առ ու տուր ա, առ ու կուլ չի. (ՄՎ. 23):  
 Աշխարհքս խելոքութունով ա (է) կերել. (ՄՎ.  
 29, 61, Կ. 460):  
 Աշխարհքս նարդիվան ա (սանդուխք է), մինը  
 նի ա ընում (մինը վեր է յեղնում), մինը (մյուսը)  
 վեր (ներքէ) զալիս (մինը ցած է իջնում). (Բ.  
 202, Հն. 5, ՄԱ. 26):  
 Աշխարհքս տես է ուս է. (Հն. 119):  
 Աշխարհքս փոխ հաց ա, վոնց կանես, ընենց կու-  
 տես. (ՄՎ. 81):  
 Աչքը (ինչքան) բարձրանա, բարձրանա, ունքից  
 վերև չի կարող գնալ (բարձրանալ). (Հն. 26,  
 ՄԱ. 26):  
 Աչքիդ վերեն ունք (հոնք) կա.  
 (Հն. 46, Կ. 110, Հն. 34, 84):  
 Աչքից ել պրծանք, աչքացավից ել. (Կ. 102):  
 Աչքից հեռու, սրտից հեռու. (Կ. 492):  
 Աչքն ինչ տեսնի, են կանի- (ՄՎ. 185):  
 Աչքն ինչքան բարձրանա՝ ունքից վերև չի բար-  
 ձրանալ. (Յ. 185)  
 Առաջնորդը յես եմ, բակլեն խաշած եմ ցանում:  
 (Յ. 221, Հն. 27):

- Առ ու տուրն ախպեր են, ընչանք տաս վոչ,  
 առնել ել չես. (Հն. 47):  
 Առավտը մերոնք մեռնին, ճաշին նրանցը (Շ. 230):  
 Ասեղ վայր ձգես, դեռինը չի ընկնիլ. (Շ. 194):  
 Աստված փլավն հում է տալիս, ախորժակըն ում.  
 (Բ. 173):  
 Ավելի թիքեն փոք չի ծակի. (Հն. 244):  
 Արևը (արեգակը) վատ տեղ մեր մտավ. (Հն. 324,  
 329, Հ. 24, Շն. 131):  
 Արևը վոք յեղնի, ասողերը կխավարեն. (Հն. 22):  
 Արյունն արնով չեն լվանալ. (Բ. 337):  
 Արջն իր ահեն կգոռա. (Կ. 147, ՄՎ. 169, ՄԱ. 14):  
 Արտն են գլխից եմ հնձել. (Յ. 98):

Բ

- Բարու բարի թափման, դուռնի ախավայինան  
 գեչար—յեթե ամենն իր հարմարը չգտնի,  
 աշխարհքս ախ ու վայով անց կը կենա.  
 (ՄՎ. 251):  
 Բանը բանին (բան) շհանց կտա. (ՄՎ. 52, Հն. 27):  
 Բաններս աջ ա, ով հաչում ա՛ հաչա. (ՄՎ. 28):  
 Բանն ի՞նչ անի—յես ու դուն, հացը ի՞նչ ուտի—յես  
 ու դուն. (ՄՎ. 22, 82):  
 Բարեկամացանք՝ բարեբարացանք. (ՄՎ. 87, Հն.  
 129):  
 Բզի գլխին բոնցքով տալ չի ըլնիլ. (Կ. 351, Հն.  
 334):  
 Բլբուլն իր գարդը կը լա, ագոավը դառ դառ կա-  
 նի. (ՄՎ. 97):

- Գայլի ձեռքից պրծանք, արջի հանդիպեցանք.  
(Հն. 111):
- Գայլի աչքերն են աղվեսին վարպետ շինել (ՄԽ.12),  
Գառնով փլավն ել ամեն ուր ուտիլ չի ըլուս.  
(Կ. 461):
- Գեղ կանգնի, գերան կը կոտրի. (ՀԽ. 261, Յ. 80):
- Գեղը գժվելիս՝ մոլլին ա հարցնում, մոլլեն վոր  
գժվի՝ ում պտի հարցնի. (ՀԽ. 334):
- Գեղի են գլուխը գնա, յերեսիցը բան հարցրու.  
(Կ. 207):
- Գելից փախա, արջի ճանգ ընկա. (ՍՎ. 281):
- Գյահկիր (յետ մնացող) ձին քարվան չի կարող  
կտրիլ. (Յ. 306):
- Գոմեշ կտար, մեղա աստծու չեք ասիլ. (ՍՎ. 295):
- Գող՝ սիրտը դող. (ՀԽ. 157, 176, Յ. 56):
- Գողը գողից գողացավ, աստված վերնից զարմա-  
ցավ. (Բ. 250, 262):
- Գողը վոր տանու ըլի, յեղն յերթկովը դուրս կը  
քաշի. (Կ. 74, ՍՎ. 117):
- Գողն ինչ կուզի՝ մութը գիշեր. (Բ. 8, ՀԽ. 272,  
ՍՎ. 241):
- Դաղած յեղը լավ կալ կանի. (Բ. 72):
- Դառը քրտնքի բերած կուպեկը ուղտի պսչ ե՛ չի  
յերկարիլ. (Բ. 123):
- Դարդակ ամբար, դարդակ ջվալ. (ՍՎ. 92):
- Դարդակ խոսքը քամին տանի. (Յ. 82):
- Դարդակ փետին շուն չի հաչալ. (Բ. 230, ՀԽ. 262):
- Դեը դարբնոցը չի գնալ. (Կ. 206):

- Եզուցվան բանին ձյուն ե յեկել. (Բ. 98):
- Ել են չուրն ե, ել են ջրաղացը. (Կ. 68):
- Ելինան դարա գյուն բայրամ դիր—համայնքի  
հետ սև որն ել դատիկ ե. (ՀԽ. 278):
- Եճն իր վոտիցը կախ կըտան, վոչխարն իր վոտիցը.  
(Հն. 88):
- Են ծառին կուռդ մեկնի, վոր կը հասնի. (Կ. 491):
- Են վաղ եր, եշը կաղ եր. (Կ. 125):
- Եշը մատաղ չի ըլնիլ, եշագինը մատաղ կըլնի.  
(ՀԽ. 51):
- Եշը ցեխից հանել. (Հն. 240):
- Ես ամպը կարկտի ամպ ա. (Կ. 170):
- Ես խմորը դեռ շատ ջուր վեր կուսի. (Կ. 494):
- Ես ուղտն ամենքի (քո) դռանն ել չոքելու ա.  
կչոքի. (ՍՎ. 253, ՀԽ. 539):
- Ես շունն ել են շանիցն ե, յերկուսն ել մի տա-  
նիցը. (ՀԽ. 60):
- Եսորվա շահին եզուցվա մանեթից լավ ա. (ՀԽ. 65):
- Եսորվա սև փողն եզուցվա սհարդանից (30 կ)  
լավ ե (Բ. 95):
- Եսոր բոշա, եզուց փաշա. (Բ. 250):

- Զառ դադրի, զարգյար բիւար—վոսկեղենի արժեքը  
վոսկերիչը կիմանա. (ՍՎ. 22):
- Զոռով արջը կալ չի լծվի. (ՀԽ. 227):

Ը

- Ընչանք եղ բանը կլինի՝ ուղտի պոչը գետինը կը հասնի. (ՄՎ. 9):
- Ընչանք խելոքը միտք կանի, գիժը աղին հարսանիք կանի. (ՄՎ. 253):
- Ընչանք չիթը կըթըջի, հիվանդի հոգին կը թռչի. ՄՎ. 9):

Թ

- Թե ուրանամ՝ յերկու՝ աչքով կուրանամ. (ՄՎ. 20):
- Թեւը վոր բարակի՝ կըկտրվի. (Կ. 122):
- Թթու յե, թան չի, ամեն մարդի բան չի. (Հն. 42):
- Թուղթը շուռ տուր, արասին կուլ տուր. (ՄՎ. 66):
- Թուղթն ել ա ձեռին, կալամն ել. (Հն. 45):
- Թունդիրն ածես՝ շորահոտ չի վեր ըլի (չի գալ). (Հն. 241, Յ. 236):
- Թուրքն ասում ա՝ հընկերը հընկերին թե չը գտնի, աշխարհքս ախ ու վախով անց կը կենա. (Յ. 186):
- Թրի յերկու գիհն ել կտրում ա. (Հն. 330):

Ի

- Իմ բանն աչ ա (ե), ով կուզի թող հաչա (թող ով կուզի հաչե). (Կ. 148, Յ. 200):
- Իմ մատը մտած փուշը քու ջանն ա ծակել. (Կ. 93):
- Իմացել են Ալին մեռել ա, համա չեն իմացել Ալին ա, թե Մահմադ Վալին. (ՄՎ. 81):
- Ինչ բրդես, այն կը խոթես. (Շն. 18):
- Ինչ կուզեն անեն՝ մեր վոչխարին վնաս չը տան. (Կ. 113):
- Ինչ վոր գնում ա՝ բաղիցն ա գնում, բաղման-

- չուցն ինչ ա գնում. (Հն. 335):
- Ինչ վոր պակասի, բաղիցը կը պակասի, բաղմանչու ինչը պետք է պակասի, (Բ. 261):
- Ինչ ցանես, են կը հնձես. (Կ. 519):
- Իշին ասին աչքի լիս, քեզ քուռակ ա ելել, ասեց՝ ինչ անես, վոր իմ բեռն իմ միջբեցը պակսիլ չի. (ՄՎ. 120):
- Իշին հարսանիք համեցեք արին, ասեց՝ իհարկե ջուր կըբերու յեք տանում. (Հն. 363):

Լ

- Լավություն արա՝ ձովը գցիր, ձուկը վոր չիմանա, աստված կիմանա. (ՄՍ. 50):
- Լավ տեղը կաշառք տուր՝ ներս գցի, փիս տեղը կաշառք տուր՝ դուս քցի. (ՄՎ. 205):
- Լեզուդ ոձը ծակիցը կը հանի. (Կ. 160):
- Լո, լո, քրդի աղին ել, լո լո. (Հն. 73):

Խ

- Խաչին տերը զորավոր կանի. (ՄՎ. 100, 319):
- Խաչը խաչապաշտին խոռով կը կենա. (Հն. 112):
- Խեբը տեսնի շերապետը, ջարմեն քաշի Կարապետը. (Հն. 112):
- Խերն ու շառն ախպեր են. (Յ. 27):
- Խողի գլուխը թալիչի վրա կենալ չի. (Հն. 192, Հն. 366, Կ. 164):
- Խոսքը պարանի չի դրվի. (Կ. 245):
- Խոսքի սուտը չի ըլնիլ սխալը կըլնի. (ՄՎ. 170):
- Խոսքն եշ նիլնիլը չի, իշիցը վեր գալըն ա. (ՄՎ. 134):
- Խոսքով փլավ չի յեփվիլ, յուղ ու բրինձ է հար-

կալոսր. (Բ. 269):

Սոստորնակին խոտորնակ. (Հն. 131, Շն. 22):

Սուփը գլորվել ա, կձուճը դտել. (Հն. 287):

Սուփը քարին առավ. (Յ. 113, 150, 238, Հն. 328, Շն. 229):

## Ս

Մամը յերկար, իեկքը կարճ. (Հն. 37):

Մառը գանգատ դնաց աստծու մոտ կացնի ձե-  
նիցը, վոր իրան կըտըում ա, ասեց՝ կոթը քե-  
զանից ա. (Յ. 155):

Մառի վորդը իրանից ե գոյանում. (Շն. 26):

Մովն ընկնողը ձեռները կածի. (Բ. 150):

## Կ

Կակղես (կը կակղես), կուտես. (Հշ. 190, Շն. 158):

Կաղ իշով քարվանի խառնվել. (Հշ. 232):

Կաղը կամբջի վրա կը բռնեն (ճանկեն). (Յ. 279,  
Հշ. 140, Հն. 584):

Կամ ադն ե պակաս կամ մաղը. (Հն. 329):

Կաշառքը մութը տեղը լիս կը տա. (ՍՎ. 201, Կ  
542, Հն. 136, Շն. 65):

Կատվին խաղ ա՝ մկան մահ ա. (Յ. 101):

Կեսուրս մեռավ, տեղըս լեհացավ. (Կ. 148, 518,  
523):

Կերակրի վրա սառը ջուր ածել. (Հն. 180):

Կձուճը գլորվեց, խուփը դտավ. (Յ. 186, Հշ. 73,  
Բ. 24, 343):

Կնիկը տղամարդի հոգին ա. (Յ. 46):

Կովը հորթին, հորթը կովին, գլուխը ցավի նախ-  
րարածին. (ՍՎ. 18):

Կրակ ել դառնա՝ երիլ չի կարող. (Կ. 81):

Կրակի առաջին չախմախի չեն տալ. (Յ. 36, Կ. 280):

Կրակին մոտ գնացողը կերվի. (Յ. 306):

## Լ

Հաղար խոսողը կը ճաքի, աշտարակցին տասն ուր  
խոսեցնես՝ վոչ ինքը կը դադրի, վոչ քեզ կը  
ձանձրացնի. (Կ. 458):

Հանաքը չանաք ե դառել. (Կ. 489):

Հաղացող թաղին հորս չի անիլ. (Հն. 169):

Հառաջ մերը՝ հետո մերոնցը. (Հն. 129, 513):

Հասկացող վորդին հոր աջու աչքն ե. (Հն. 290):

Հալն տունը կենա, կուտն ուտի. (ՍՎ. 43):

Հարսանիքն ու մահենիքն ախպեր են. (Հն. 591):

Հացը հացարարին տուր, մինն ել եվելի. (ՍՎ. 82,  
252, Կ. 205, 214, 463):

Հեսար դինար-դինար, բաղձի՞ թուման-թուման  
— հաշիվը կողեկ - կողեկ, պարգեը՝ թուման  
- թուման. (Հն. 41):

Հերերը մուռ կերան, վորդիերանց ատամն առավ.  
(Հն. 598):

Հին դարմանը քամուն չեն տալ. (Յ. 229, 336):

Հինգ մատն ել իրար բարեբար են, վորը կտրես՝  
կը ցավի. (ՍՎ. 282):

Հուները շինելու փոխարեն՝ աչքը հանել. (Հն. 234):

Հուները փուշ կուլ տալը չի, հունարը մարսելն  
ա. (Կ. 154):

Զուկը ծովու մը կը մեծանա. (Շն. 191):  
 Զվաճեղի խաթեր թավի կոթը կը պաչեն. (Հն.  
 193, Բ. 179, ՍՎ. 23, Շն. 48):

Ղ

Ղոնաղն աստծունն ա. (Հն. 558, 564):  
 Ղամթի ճամփեն կապիլ չեն. (Հն. 15):

Ճ

Ճամփի կիսիցը յետ դառնալը նամարդու թյուսն ա՛  
 (Հն. 338):  
 Ճանճն ածում է, ճիճուն կրում. (Հն. 468):  
 Ճաշն ուտելուց հետո ձեռին ջուր չեն ածիլ. (Հն. 8):  
 Ճշմարիտ խոսողի տակին մի Արարըստանի ձի պի՛  
 տի. (Ց. 306):  
 Ճրագի առաջին չախմախի չեն տա. (Հն. 331):

Մ

Ման յեկողը յա շորին կը ճարի, յա՛ փորին. (ՍՎ.  
 43):  
 Մանիշակ—գարնան շիշակ. (ՍՎ. 16):  
 Մատդ մարդի աչքը կոխելու լինիս, չի նշմարիլ  
 (Շն. 64):  
 Մարդ իր մեռնելու որի վրա չպիտի խոսի. (Կ. 12):  
 Մարդ մարդի դարդ չի գիտենալ, կես քշերի՞ն  
 ժամ կը կանչի. (ՍՎ. 14):  
 Մարդամիջի մարդս ըլի, հազար թուման պարտք՞  
 ըլի. (Հն. 187):  
 Մարդս մարդով ա. (Հն. 221, Հն. 284):

Մեծ տունը մեծ ընտանիք կունենա. (Ց. 174):  
 Մեկ ձեռքով յերկու ձմերուկ բռնել. (Հն. 231):  
 Մեղը ծախողը մատը կը լպտափ. (Ց. 85, Հշ. 27, Բ.  
 261):

Մեղանիդ գյորա ձիդ քշի. (ՍՎ. 35):  
 Մենծ եշն ախոռումն ա մնացել. (Հն. 547):  
 Մեշի ծաղիկը շատ ա, համա մարալներն իրար  
 թավաղա յեն անում. (Կ. 464):  
 Մեջ ուտիլ՝ դրադ ման գալ. (Հն. 547):  
 Մեջք մեջքի կը տաք՝ սարեր շուռ կը տաք. (Հն.  
 394):  
 Մի առվով վոր մի անգամ ջուր ա գնացել, ելի  
 կերթա. (Կ. 111, 460, Ց. 229):  
 Մի դարդը մարդ չի սպանիլ. (Հն. 594):  
 Մի ծառից համ թի կըլի, համ հորսըլի. (Կ. 133,  
 137):  
 Մի ձեռը ծափ չի տալ. (Հն. 213, Ց. 289, Հն. 284):  
 Մի տան շերեփ վոր յերկու տանդկան ձեռքն ըլնի,  
 շուտ բաժանք կըլնի. (ՍՎ. 4):  
 Մի փունջ ծաղկով մայիս չի դա. (ՍՎ. 239):  
 Մինը ըռի, մինը՝ ըռի. (ՍՎ. 35):  
 Մինչև խելոքը միտք կանի, գիժը աղին կը պա-  
 կի. (Հն. 324):  
 Մկան ծակը 100 (1000) թումանով է առնում (կառ-  
 նի, առավ). (Կ. 86, 550, Ց. 273 Հն. 20, Հն. 218):  
 Մոտիկ հարեանը լավ ա հեռու բարեկամիցը. (Հն.  
 129):  
 Մուկը ծակը չեր մտնում, ցախավեն ել պոչիցը  
 կապեցին. (ՍՎ. 72):

- Յեզը ծախել, հոգին թափել. (Հն. 21);  
 Յեզը վեր ա քաշում (վեր են կացնում), տակիցը  
 հորթ ուղում. (Հն. 21, ՍՎ. 196, ՄԱ. 10);  
 Յեզը վոր վեր ընկնի, դանակավորները կը շատա-  
 նան. (Կ. 160);  
 Յեկել և մեր մեշեն, կըսովորի մեր փեշեն. (Յ. 218);  
 Յերկաթը տաք տաք կը ձեծեն. (Հշ. 183, Յ. 272,  
 ՍՎ. 303, Հն. 394, 542, 558, Կ. 141, 143, Շն. 88);  
 Յերկու զոչի գլուխ մի պղնձում չեն յեփիլ. (Բ. 188);  
 Յերուսաղեմն ել առանց շների չի. (Հն. 343);  
 Յա դառն գյարաք՝ յա դոռն — կամ՝ վոսկի պիտի  
 ունենաս կամ ույժ. (Հն. 332);

## Ն

Նալին ել ես խփում, մեխին ել. (Կ. 460);

## Շ

- Շան հեա աղպերացի, փեաը ձեռիցդ մի վեր քցիլ  
 (ՍՎ. 197, Յ. 128, Կ. 205, ՄԱ. 19);  
 Շանիցը մազ պոկելը խեր և. (Բ. 98);  
 Շանը կտան՝ տիրոջը խաթը կանեն. (ՍՎ. 197);  
 Շատ գիտցող ազվեսը շուրա փոտով թալավ  
 կընկնի. (ՍՎ. 100, 180, Կ. 486);  
 Շատ գատես՝ շատ ուտես. (ՍՎ. 270);  
 Շատ հեռու յես բարեկենդանից. (Հշ. 243);  
 Շատ մի սիրիլ՝ ատել կա, շատ մի շատիլ՝ սիրի  
 կա. (Հն. 215);  
 Շիտակ խոսքը հանաքով կասեն. (ՍՎ. 260, Բ. 96);  
 Շունը կը հաչի, քարվանը կը քոչի. (ՍՎ. 207);

Կ. 149, Հն. 544, Յ. 191);

- Շունը շան միսը չի ուտիլ. (Հն. 106);  
 Շունը շանից՝ յերկուսը մի տանից. (Կ. 68, Հն. 106,  
 ՄԱ. 19);  
 Շտապող թառանը (բազե) վորս չի անիլ. (Կ. 460)

## Ո

- Ոձի գլուխը վոր կը ցավի, կերթա ճամբի մեջ տե-  
 ղը վեր կընկնի. (Հն. 47, Հն. 38);  
 Ոձի սեին ել նալաթ, սպիտակին ել. (Հն. 60);  
 Ոձի փուշը լակակը կը մարսի. (ՍՎ. 199);  
 Ոճաղտան քյուլ աքսիկ ոլմադ. (ոճալիցը մոխրի  
 չի պակսիլ. (Կ. 118);  
 Ով չուշա, նա կուշա. (Հն. 573, 574);  
 Ով վոր աշխատի՝ նա կուտի. (ՍՎ. 7);  
 Ուզաը ինչքան սատկի, ելի կաշին մի իշի բեռը  
 կընի. (ՍՎ. 80, 179, Կ. 161, ՄԱ. 4);  
 Ունքը շինելու տեղ՝ աչքն ել կը հանի. (Կ. 486,  
 Հն. 310);  
 Ուշ եկավ՝ նուշ եկավ. (Հն. 36);  
 Ուրբաթը թեղ յեկավ, քանց շաբաթը. (ՍՎ. 204);  
 Ուրիշի համար փոս (հոր) փորես (փորողը), ին-  
 քը մեջը կընկնիս (զլխի վրա յե անկվում),  
 (Սք. 75, Շն. 224);  
 Ուրիշի ձեռքով փուշ բռնի. (Հն. 310);  
 Չալ սճը տեսնողը չալ չաթվից կը վաթի. (ՍՎ.  
 71, 168, Կ. 232);  
 Չեմ ուզում՝ ջերս քցի. (Հն. 219, Բ. 252);  
 Չորս փոտով գարու հորն ընկնել. (Հն. 174);



Պ

- Պղինձը վեր ընկավ՝ կոտորվեց վոչ (չկոտորվեց)՝ համա ձենը վեր ելավ. (ՍՎ. 252, Յ. 245):  
 Պատը ջրի մեջ թոռ գցել. (ՀՆ. 241):  
 Պատիկ ա ու ճատիկ ա. (Բ. 234, ՀՆ. 306, 312):

Ջ

- Ջուրը ջրամանիցը հանել. (ՍՎ. 44, ՀՆ. 241):  
 Ջուրը չը հասած վտաններն և հանում. (Յ. 240)  
 Ջուրն ընկնողն անձրևից չի վախիլ. (Հն. 192, Յ. 245, Կ. 92):  
 Ջուրն ընկնողն ամեն մի ձեղիցն ել փրկություն և սպասում. (Շն. 123):  
 Ջուրն իր ճամփեն կը գտնի. (ՍՎ. 324):  
 Ջրի ափը չի հասած՝ վտաները հանել. (ՍՎ. 10):  
 Ջրի հետ դնալ, դմի (ավազի) հետ մնալ. (ՍՎ. 317):

Ռ

- Ռահաթի սիրտը լեն կըլնի. (ՀՆ. 266):

Ս

- Սանդն ել ա իրա ձեռին, դաստեն ել (պոպոքն ել). (ՍՎ. 102, Կ. 44, ՀՆ. 60):  
 Սերը սովորը կուտի. (ՍՎ. 199):  
 Սերն աթաբիցն ա կպել. (Կ. 489):  
 Սե փողը սե որին բանացրու, գեղին վոսկով սարեր դարձրու. (Բ. 123):  
 Սիրտս սուփրա չի՝ ամեն տեղ բանամ. (Կ. 501, 511):  
 Սովածը հաց կը տեսնի յերազում ծարավը՝ ջուր:

(ՍՎ. 273):

- Սուր լեզուն ոճը ծակիցը կը հանի. (ՀՆ. 23):  
 Սուփրեն պցած՝ բանն անիծած. (Հն. 86):  
 Սրբի դուռն ել առանց խաչհամբուրի չեն գընում. (Բ. 269):

Վ

- Վաղի ազվեսի պես՝ դուռնչներս չի հասնում, ասում ենք՝ թթու ա, առամներս կաննի. (ՀՆ. 98):  
 Վաղի սազը քոքել (ձանոթ բան ասել). (ՀՆ. 333):  
 Վայ հաթին, վայ նհաթին. (ՀՆ. 511):  
 Վատ համբավը շուտ տեղ կը հասնի. (ՀՆ. 406):  
 Վոդը վեր կալած ջաղացը խարաբ կանի ցորնի հացը. (ՍՎ. 66):  
 Վոտոգ կարպիտովդ արա (մեկնի). (Հն. 33, Կ. 473):  
 Վորտեղ բարակի՝ ենտեղ կտրվի. (Յ. 245):  
 Վորտեղից և կինդ, այն տեղից ել դու. (Շն. 217):  
 Վորտեղ հաց, ենտեղ կաց. (ՀՆ. 174):

Տ

- Տանու տերտերին որհնյա տեր չկա. (Կ. 367):  
 Տանուտերի վկեն գղիլն ա. (ՍՎ. 202):  
 Տանտրոջ վրա լիս վեր եկավ, ռվ տեսավ—գղիլը. (ՍՎ. 202, ՀՆ. 236):

Փ

- Փարչ, քեզ ասեմ, կուլա, դու լսիր. (ՍՎ. 291):  
 Փեշաքյարը (արհեստավոր) փեշաքարին թշնամի ա. (Յ. 237):  
 Փեղը վերցնես՝ գող շուռը կիմանա. (ՍՎ. 22, Կ. 465)  
 Փոխը ոխաը տուն ա պահել. (ՀՆ. 205):

Փողն ու հողը մին ա. (ՍՎ. 4):

Փորը վոր կա, անտակ ձոր ա. (Կ. 122):

Փորձանքի կես ճամփիցը դառնալը խելօքու-  
թյուն ա. (ՀՆ. 426):

Ք

Քաղցած ճաշին են քնում. (ՀՆ. 273):

Քաղցը լեզուն ոձը ծակիցը կը հանի (Կ. 134):

Քաչալը դեղ գիտենա, իր գլխին կանի. (Կ. 313,  
Բ. 294):

Քարն իր տեղը ծանր կըլնի. (ՍՎ. 77, Շն. 225):

Քարը վեր կալած՝ քարի տակին դրած. (ՍՎ. 179):

Քարը վերցնենք՝ քարի տակը դնենք (Քաղցը-  
նենք). (Յ. 161):

Քենին մհանա արել, յարոջը տես ա եթում.  
(ՀՆ. 99):

Քենին նշանածի բերանն ե. (ՀՆ. 220):

Քթալ քթալ հավաքում ենք, շերեփ շերեփ դուրս  
տալիս. (ՀՆ. 468):

Քնածն ու մեռելը մին ա. (ՍՎ. 17):

Քո բանն աջ ա, ով կուզի թող հաչա. (ՀՆ. 65):

Քո ցերեկվա ման յեկած տեղերը յես գիշերն եմ  
ման յեկել. (Բ. 253):

Քոռն քնչ կուզի—յերկու աչք. (ՀՆ. 201):

Քույրն ասում ե յեղբայր ունիմ, յեղբայրն  
ասում ե քույր չունիմ. (ՀՆ. 215):

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ

ՈՒ

ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՐԲԵՅՈՒ ՅԵՎ, ՍԱՏԱՆԱՅԻ ՎԵՃԸ

Մի անգամ, վորպես թե, մեծ վիճաբանություն  
է ծագել կարբեցու և սատանայի մեջ. արևի ծագումն  
է յեղել նրանց հակաճառության շարժառիթը. նրան-  
ցից ամեն մեկը պարծեցել է յուր հեռատեսությամբը.  
պայքար են մտել, դաշն են կապել, մեծ վճարք են  
դրել, թե ո՞վ իրանցից շուտ կտեսնի արևի ծագումը:

Արշալուսից ելի կանուխ՝ յերկուսն էլ կանգնել  
են վորոշյալ տեղում. դեպի արևելք է սևեռել յուր  
աչքերը սատանան և սրտատրոփ սպասել է յերկրի  
լուսատուն տեսնելու և դաշը շահելու: Դեպի Ավագ  
Մասիսի յերկնածայր և արեգարդ կատարն է նայել  
ճարպիկ կարբեցին:

— Հաղթությո՞ւն, ծագի զարկելով ձայն է տվել  
կարբեցին և ցուցամատով պինդ խթել է յուր հակառա-  
կորդի կողքը:

— Ի՞նչ է:

— Չոռն ու ցավը պինչդ է, կույր ես ու ստածու  
յերեսից ընկած. ի՞նչ ես դունչդ արևելք ցցած մնացել՝  
դարու հոտին քիթը վեր քաշած իշի պես, աչքդ արև-  
մուտք դարձրու, ահա պսպղում են Մասիս պապի  
արծաթափայլ մագերը, չե՞ս տեսնում, ձյունի վոսկեշաղ  
հատիկներն անգին արմաստի պես աչք են ծակում,  
հիմի աչքերիդ յեղած լույսն էլ կը կտրեն:

— Իրավ, վոր աչքով էլ, մտքով էլ կույր եմ յեղել,

վոր աշխարհքի ստեղծագործությունից մինչև ես որ հարյուրավոր փորձանք եմ հասցրել այս աշխարհքին ու վոչ մի որ չեմ նկատել, թե Մասիան և յուր վիթխարի հասակովն արևին առաջին բարեք տվողը, խոստովանում և անկտարումը:

Բ. 18—19.

ԿԻՍՈՎԻ ԳԱԶԱՐ ՅԵՎ ՅՈՐԵՆ ՅԱՆՈՂ ԿԱՐԲԵՅԻՆ  
ՈՒ ՍԱՏԱՆԱՆ

Յերբ վոր չար սատանեն իմացավ, վոր կարբեցին արևն իրանից շուտ տեսավ, ինքը սեւերես, ամոթով մնաց, միտք արեց՝ մի հնարքով յերեսի կեղտը սրբել, խոսքի տակ չը մնալ:

— Յեթե դու այդքան գիտուն ես, ասաց նա կարբեցուն, կը նշանակի մի պատիկ սատանա յել դու յեսարի յեղբայր դառնանք, աշխատանքի կաշենք, առ ուտուր անենք, թե կուգես՝ վար ու ցանք անենք, դատումը հավասար բաժին անենք:

— Շատ լավ, ասաց կարբեցին ու մեջները համաձայնություն կայացավ:

— Ի՞նչ դործ բռնենք, վորոգու ւար շատ լինի, մտածեցին նրանք ու վերցրին, գաղար ցանեցին:

Տարին անձրևային եր, գաղարի թուփը մի գաղ բարձրացավ:

Սատանեն, դորթ և սատանա յե, ճարպիկ ու գալում և, բայց մարդիկ մոլորեցնելուց ու մեղքի մեջ գլորելուց ավելի ուրիշ շնորհքներն աստված նրանից կտրել և նա յուր կյանքումը հողագործություն չեր արել: Բայց ինչ կանես, վոր աչքածակ և միտք

արեց, թե ինչ հնարքներ դործ դնի, վոր կարբեցուն խարի, սգուտից զրկի:

— Արի, ասաց, կարբեցի յեղբայր, ել դու նեղություն մի քաշիլ գաղարը հնձելու, յես ինքս կը հնձեմ, յերեսն ինձ՝ արմատը քեզ. յես ինքս կերած չեմ, բայց լսել եմ, վոր գաղարի արմատը թփերիցը համեղ և:

Կարբեցին մտիկ տվեց սատանի աչքերին, յուր սուր խելքովը նրան վտտից չափեց, տեսավ, վոր եղանպողի հենց անունն և սատանա, ինքը կատարյալ անասունների անասունն և, յերևում և, վոր գաղարի հոտն ել չի առել, ծիրանի ու դեղին գույնն ել չի տեսել:

— Շատ լավ, ասաց նա սատանին, թող քո ասածը լինի, քեզ փեշքյաշ, դնա յերեսը հնձի, վեր կալ, տակը թող ինձ մնա:

Ուրախ ուրախ հնձեց սատանեն գաղարի տերևները, գեղացու պատկերի մեջ մտավ, մի մեծ սել լցրեց ու տարավ Յերևան ծախելու:

— Գաղար եմ ծախում, գաղար եմ ծախում. քանի ուշժ ուներ, սկսեց գոռալ ու մուշտարիք տաքացնել սատանեն:

— Հիմար գեղացի, լսողը պատասխանեց, եշն կնքդ ես, վոր ուղում ես մեղ իշացնել, թվ չգիտի, վոր գաղարի թփերն եշն ել չի ուտում:

Ղորթ վոր շփոթված ու մոլորված կանգնել եր սատանեն շաշի նման, բերանը բաց:

Մեկ ել ինչ տեսնի, յուր հարակաշ կարբեցին գաղարի բեռն իշին բարձած՝ բերեց մեկգտնումը վեր դրեց: Բաղմությունը զլխին հավաքվեց, ձեռաց մարդի ապրանքը ծախվեց, փող դառավ:

Աննողը յետ եր դառնում, սատանին անպատ-  
վում, թե՛ անխելքի վորդի անխելք, աչքերդ չորս բաց  
արա, գազարի թփերն իշի նման դու կեր ու արմատը  
բեր մեղ ծախիր. ես մարդիցն որինակ վեր կալ, սա  
յել քեզ նման մի գեղացի յե:

Չար սատանեն սրտի հերսիցը սկացավ, կուպր  
դառավ, ինչպես յուր պիղծ հողին սև է, ամո-  
թիցը տեղն ու տեղը անգունդը հալածակվեց. բայց  
ատամները կրճտացրեց կարբեցու վերա, թե՛ յես  
սատանա չըլնեմ, յեթե վրեժը չը հանեմ:

Մյուս գարունը ել յեկավ, կարբեցուն առաջար-  
կեց ընկերանալ: Նա յել համաձայնեց:

Եղ տարին հացի թանգություն եր, վճռեցին  
ցորեն ցանել:

— Չե՛, ախպեր, ասաց նրան աշունքը սատանեն,  
հերու գազարումն յես վնաս քաշեցի, խարվեցի, յերե-  
սը յես վերցրի, տակը քեզ տվի, ես տարի մեռել ես,  
կարվել ես, արմատը յես պետք է վերցնեմ, յերեսը  
քեզ տամ, հնձի, առ գնա, կուզես ինքդ կեր, կուզես  
տավարիդ ուտացրու:

— Համ ինքս կուտեմ, համ տավարիս կուտեցնեմ,  
պատասխան տվեց կարբեցին և մարանդուն դրեց, ցոր-  
նի արածը հողի բերնիցը հնձեց, վեր կալավ, անպետք  
արմատը սատանին բաժին թողեց:

Ես բաների համար ե, վոր կարբեցոնց ճառա-  
նախարք են ասում:

Բ. 94 — 97.

## ԽԱՌԱՏ ՄՈՒԲԱԳԻՐ ՅԵՎ ՔՅՈՌՈՂԼՈՒ ՂՌԱԹԸ

Այդր գյուլը հասարակ ջուր չի, նրա ջուրը չի գնում,  
միշտ կաննած ա, նա անտակ ա, մարդ չի կարող նրա  
մեջը մտնել: Են սհաթը կուլ կը տան հրեղեն կենդանիքը:  
Ուրիշ ջրերի միջինը ձկներ ու գորտեր են, համա  
Այդր գյուլի միջին սրանց վոչ մինը չես գտնիլ. հրեղեն  
ձիանք, սպիտակ հրեղեն գոմեշներ, մարգաձուկն ու  
շատ ուրիշ գազաններ են լիքը Այդր գյուլումը: Եղ  
հրեղեն ձիանոնց ցեղիցն ա Քյոտողլի գոաթը, վոր  
թեկավոր է յեղել: Այս բանը, իբր թե, տեսել է խառատ  
Մուրատը: Նա տասը, տասն և հինգ փայտե ուղտեր  
չինած՝ իրար քամակից կապած՝ սանձը ձեռին քաշելով՝  
կողբից աղ է յեղել բերելուս. հանկարծ դիմացից  
տեսնում է Քյոտողլին յուր կտրիճներով և յերկյուղից  
քանդում վաչք թափում գետնին յուր ուղտերն և դար-  
ձնում մի կույտ փայտ ու ինքը մտնում Այդր գյուլի  
ցեղեզների մեջը:

Քյոտողլին՝ վոր նկատած է լինում ուղտերի շար-  
քըն և հիմա գտնում է փայտացած — շատ դարմանում  
է այս հնարադետ վարպետի վերա. ուր — վոր լինի,  
հրամայում է յուր քաջերին, պտտել այն մարդուն և  
յուր առաջին կանգնացնել: Խուզարկուները քաջ դի-  
տելով, վոր մարդը թագկացած կը լինի յեղեգնուաների  
մեջ, իջնում են այնտեղ, ձիանքն արոտի թողնում և  
սկսում վորոնել: Ամբողջ ուրը յերբ վոր Քյոտողլին  
զուր ժամանակ է կորցնում, վարպետը մի ասեղ է  
դառնում ու կորչում, հրամայում է ձայն տալ, թե

1) Դուրսն եր այն առասպելական նմուշ ձին, վորով Քյոտ-  
ողլին քաջության անուն է տարել: Ծանոթ. հեղինակի:

ինքը յերգովում և յուր սրովը, վոր յեթե փայտե ուղ-  
տերի տերը դուրս գա ինքնահոծար, նա նրան վոչ  
միայն չի պատժիլ, այլ և կը վարձատրի. ապա թե  
վոչ յերեք շաբաթ շրջապատած Այդր դյուրը՝ քաղցած  
պիտի սպանի իրան:

Յեվ ահա դուրս և գալիս Մուրազը դողողալով  
և գլուխ տալիս Քյոտողլիին:

— Հրամեղիք, գլխիդ զուրբան:

— Ընչի՞ թագ կացար:

— Քո անունից աշխարհքն և սարսափում, և ու-  
ղիղն ասեմ, հիմա ել չեյի դուրս գալ, յեթե քեզ ավե-  
տիք տալու առիթը չունենայի: Մուրազը պատմում և  
Քյոտողլիին, վոր ինքն ականատես եր, յերբ նրա մա-  
տակ ձին արածում եր լճի ափումը, մի հրեղեն սպի-  
տակ այդր ձի դուրս յեկավ ջրի միջից, թռավ նրա  
մատակի վերա ու կրկին ջրի տակը մտավ:

— Ուրեմն դու ազատ ես, սարքիք քո սղտերդ,  
բարձիր բեռներդ և ճանապարհ ընկիր:

Մուրազն ստացավ Քյոտողլիի ընծայն, կարգի  
բերեց յուր ձեռագործը, բարձեց ազն և դնաց:

Քյոտողլիի հրամանով ի պատիվ այն այդր ձիու  
վորը տասն և մեկ ամսից հետո պարզեց իրան նրա  
սիրեկան դաթին՝ այդ լիճն այն որվանից կոչվում և  
Այդր դյուր:

Հն. 28—29.

ԱՐԱԳԱՏԻ ԿՕՏԱՐԻ ԼՃԻ ՅԵՎ ԱՅՂԸ ԳՅՈՒԻ ԶԻՆԻ  
ՄԵՋ ՅԵՂԱՍԾ ԿԱՊԸ

Ասում են, վոր Այդր դյուրի ջուրը գալիս ա Արա-  
գած սպրի կատարումն յեղած լճից. եղ բանն իմա-

ցել և մի հովիվ: Նա այծի քամակից ձգում և յուր  
գավազանը, վոր ընկնում և Արագածի լճի մեջը: Մին-  
չև մոտ և գալիս հովիվը, տեսնում և, վոր յուր գավա-  
զանը ջրի յերեսին չի: Այս յերևույթը նրան կարծիքի  
տակ և ձգում, մանավանդ յերբ նա Արագածի ստորոտ-  
ներումը վոչխարներն արածացնելուս, գլուխը գետ-  
նին և դնում մի փոքր հանդոտանալու, միշտ ջրի  
քչքչոց և լսում: Մի շաբաթից հետո դիպվածով նույն  
հովիվն յուր վոչխարները դաշտն իջեցնելուս, Այդր  
դյուրի մեջ տեսել և յուր փայտը: Հովիվ կասկածն ավե-  
լի սաստկանում և, նա մտածում և, վոր Արագածի  
դլխի լճի և Այդր դյուրի մեջ հարբերություն կա,  
անպատճառ ջուրը Արագածից գետնի տակովը հստում  
և ներքև և գոյացնում և Այդր դյուրը. դրա համար հո-  
վիվը մի ջլալ դարձան շալակում և, բարձրանում  
Արագածի կատարը և լճի մեջ լցնում. յերկու որից  
յուր դարմանի հետքը Այդր դյուրումն և դանում:

Հն. 28—29.

### ՔԱՐՎԱՆՂՈՒՆ ԱՍՏՂԸ

Քարվանը դաշտումն և յեղած լինում, ամպը պատած  
գիշեր և լինում, հանկարծ յերկինքը պարզում և,  
քարվան-բաշին կարծում և, թե Լուսաստղն և, քարվանն  
ըշտապացնում և, վեր և կացնում ու ճանապարհ ընկ-  
նում:

Շատ ահ ու դարհուրելի տեղով պետք և անց-  
կենային, դնում են, դնում, լույսը չի բացվում. մեկ  
ևլ մի խոր ձորի մեջ գողերը դրանց հառաջը կտրում

են ու բոլորին բրդում, վեր ածում: Ասողը սխալա-  
ցրեց, քարվանը կոտորել ավեց, անունը մնաց Դար-  
վան — զուան:

Բ. 48.

### ՀԱՐԹԱԳՈՂԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Մի գիշեր բլբլան Բելը գնացել էր մեր Հայկ  
պապի մարագիցը մի թոռ լիքը դարման գողացել, շա-  
լակն առել ու փախչում: Ջանս քեզ մատաղ, Հայկ  
պապի, շնորին քիս էր ավել քամակիցը. ինքն էլ մի  
բարձր կոնդի գլխի կանգնել էր ու մտիկ տալիս:  
Բելը դարմանը շաղ տալով փախչում էր: Մեր խելոք  
պապը հենց վոր տեսավ, թե շնորը չը կարացին հասնել  
գող Բելը դիմացի սարի քամակն է ուղում անցկենալ,  
ու ազատվել, են սհաթը դադ ու կիսանոց, կոանս պես  
հաստ նետը գեմ քցեց աղեղի լարին, աչքեց ու լարը  
ձգեց: Նետը սըլ...լ...լ... գնաց, եդ գող ու ավաղակին  
ծակեց ու վզալով անց կացավ հինգ որեն ճամփա,  
հեռու, վեր ընկավ:

Դարմանի թոռը Բելի մեջքիցը գլորվեց, պատուվեց,  
մնացողն էլ ենտեղ շաղ անցավ, յերկնքի յերեսը բըռ-  
նեց:

Ինքն էլ գլխի վերա կունդիկ-կունդիկ անելով,  
սարի ձերիցը գլորվեց ձորը:

Բ. 50—51.

ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՅԵՎ

ԱՇՈՒՂԱԿԱՆ ՅԵՐԳԵՐԻՆ

ՄԻ ԳԱՐԳ ՌԻՆԻՄ . . .

Մի գարգ ունիմ, գարման կուզեմ,  
Դարմանս ջիվան ջան կուզեմ.  
Ամեն շնորհք ձեռիցը գա,  
Ինքն ել հուրի զլման կուզեմ:

Միրով մոտս գալ ունենա,  
Հաքի շորն ալ ունենա.  
Սորսր աալով, սիրուն դեմքով  
Կաքավների նման կուզեմ:

Իմ սիրածն ել ինձ ա սիրում,  
Միրո բոցը սիրան ա երում.  
Եսպես ուխտի պինդ մնալը,  
Մինչև որն մահվան կուզեմ:

Գարնան վարդ ա՛լ բյուրբյուլ ունի,  
Ինձ գոանը միշտ գուլ ունի.  
Վարդ բյուրբյուլի սուրբ խորհրդին  
Յես մի բարի վախճան կուզեմ:

Վարդիս ծառը շատ փշոտ ե,  
Ձեռ մեկնելուս կը ծակատե.  
Ճամփին ամաժ տատաշի տեղ,  
Փափուկ չայիր չիման կուզեմ:



Թեկուզ արնի մեջը կորչի՞մ,  
Սուր փշերից բոլոր ուռչի՞մ,  
Ելի ճամփիցս յեա չեմ դառնայ,  
Վարդիս համար տալ ջան կուզեմ:

Չի ասեք, թե Սոս, քանի՞ լաս,  
Վարդ կանչելով միշտ մղկատա.  
Սազ վարդը ձեզ՝ մի թերն ել ինձ,  
Ասոված անի արժան կուզեմ:

ՍՎ. 231.

ՔՈՒՉՈՒՄԸ ՄԱՆ ԵՍ ԳԱԼԻ . . .

Բուչումը ման ես դալի,  
Տեսնողին եշե ես տալի,  
Սիրադ սրտիս կպցնելով,  
Սչք ու ունքով կամ ես տալի:

Թուխ աչքերիդ ադամանդը  
Կտրել ե սրտիս բանդը,  
Թերթեուքդ իրար տալիս,  
Իմ կամացը տեղ ես տալի:

Դուռը կանգնած նայում ես միշտ,  
Ուրախ սրտիս ընում ես վիշտ,  
Մի քիչ տխրած ժամանակդ ել  
Յերեխայի պես եմ լալի:

Վախտ հազ կանես, հեչ չես դուս գալ,  
Ձահել ջանիս խնդում չես տալ,

Վախտ երկուսով, պողբուչկիով,  
Խունջիկ կը գաս, իմ նազելի:

Ի՞նչ ելավ քեզ ես շարթումս,  
Վոր կտրեցիր անուշ քու նս,  
Խեղճ քո Սոսի սրտին եղբան  
Ինչի՞ սիրովդ սոր ես տալիս:

ՍՀ. 181 — 182.

ՍԻՐԵԼԻ ՉԱՆ . . .

Սիրելի ջան, հեռացար,  
Չըլինի՞ ինձ մոռացար.  
Սրտումս վառ ա քու սերը,  
Երում ա ջիգյարիս ծերը:

Դու մի հատ ես աննման,  
Աշխարհումս գովական.  
Փոթոթում ես տեսնողին,  
Կրակում նրա հոգին:

Ձենդ ա հրեշտակի,  
Չըկա յերկնքի տակին.  
Հոողի խելքը կերթա,  
Ել չի կարող հեռանա:

Շատերը գիտեմ յես,  
Վոչ մի՞նը չաժեն քեզ.  
Գիշեր ցերեկ յերազով,  
Քեզ գրկում եմ հավեսով:

Չավտառա խոսքին շատերի,  
Ինձ մուղարար միտդ պահի,  
Սոսը քեզանից սավահի,  
Եւ չի սիրել ուրիշի:

ՍՎ. 155—156.

Ն Ա Ն Ի Կ

Նանիկ արն, մեծանաս,  
Հալիվորիս, ձերանաս.  
Յերբ վոր խելքիդ տեր ընիս,  
Պառավ տատիդ չմոռանաս:

Տատը գլխովդ պտիտ գա,  
Ինչ խաթա ունիս՝ տատին գա.  
Յերեսիս մի բուռ հող քցես,  
Իմ տեր ու տիրական բալա:

ՍՎ. 138.

Ը Ն Չ Ա Ն Ք Յ Ե Ր Բ . . .

—Ընչանք յԵրբ յես զիմանամ, մտչեցիր ջանս, Վար-  
զիթեր,  
Կտրեցիր կյանքիս թելը, դու իմ հողեհանս, Վարդիթեր,  
Սերդ կրակ ա դառել, երուժ ա ջանս, Վարդիթեր,  
Հերիք ա ինձ չարչարես, կտրի տանջանքս, Վարդիթեր:

Թ ու խ-թուխ մագերիդ հյուսը, աղեղնաձև ունքերիդ  
հետ,  
Հրեշտակի ճակատդ՝ վոսկի փինջան աչքերիդ հետ,  
Գրախտի դուռ բերանդ, սիպտակ շարժող պոռններիդ հետ,  
Գրավել են իմ սիրտս՝ մորթել կենդանս, Վարդիթեր:

Յարար կըլնի, վոր բոնեմ լիսաթաթախ ձեռներդ,  
Շընքովս պտիտ տամ յերկար բարակ կոներդ,  
Պահեմ ճակտիս դնեմ, ակնամուժի մատներդ,  
Ասեմ թե ել դարդ չունիմ, իլ հողեհաս, Վարդիթեր:

Եզուց ժամ պտի դնաս, դնացած ժամիդ մատադ,  
Ճամփեդ պիտի սպասեմ, կես գիշերիցն ել շատ վաղ.  
Դուռը կտրած կըկաննեմ, վոր քու սուրբ յերեսի շադ  
Արևի հետ ինձ գիպչի, կաչողի բանս, Վարդիթեր:

Մանիշակի եմ ման գալի, քեզ ընծա տալու բերեմ,  
Վոր ամենքը իմանան, թե յես իմ խոսքին տեր եմ,  
Մարտ ամիսն ա, հեշտ բան չի, սվ կասի ձինը քերեմ,  
Մատներս թիակ շինելով, անեմ ես բանս, Վարդիթեր:

Հայաստանումը մի հատ ես, վոչով չունի քեզ պես յար,  
Քեզ տեսող ազապ աղեն գլուխը կտա քարեքար,  
Կուզի սերդ իրան քաշիլ, մեռնիլ հետդ բարեբար,  
Համա դամիս ձեռիցը կփովի կուսնս, Վարդիթեր:

Սոսի դարդը քանի կա՝ խոսքիցը յետ չի դատնալ,  
Դիշեր ցերեկ անհանգիստ, գլխին տալ պտի ու լալ.  
Յերբ քեզ կառնեմ կպրծնեմ, հաց կուտեմ կուշտ ու  
հալալ,  
Բան ու գործ կթողամ, կնստեմ տանս, Վարդիթեր:

ՍՎ. 6—7.

ԻՆՁ ԵՐՈՒՄ Ա ԵՆ ՍԵՐԸ . . .

Ինձ երում ա են սերը, վոր դիշեր ցերեկ վառ ա,  
Հերդ ու թոքս խաշում ա, վա՛յ, յես սարարի դառա.  
Աստված սիրողք, ջուր ածեք, ես սերն ելավ իմ մահը,  
Սիրեկանիս անունը ինձ արեց փարա փարա:

Մեռնիմ են աչք ու ունքին, վոր ծիածան ա ու արև,  
Մեռնիմ են անուշ լեզվին, վոր տեսնելիս տա բարև,  
Մեռնիմ խուճուճ մազերին՝ ընչանք ծունկը կախ ընկած,  
Ով վոր տեսնի՝ զարմանա, նրա սիրտը լեռ քար ա:

Թշերի ծերը վարդ ա, պոսշները շարմաղ են,  
Սաղաֆի պես առամները մարդի հողին կը քաղեն,  
Պատիկ կարգին բերանը, կաքավակտուց չանեն,  
Փափուկ մախմուր բոխախը, դու՛յ բարձի հավասար ա:

Շիշակ տնկու հասակով, սիրամարդի տեսքովը,  
Բամպակի պես կոներով, նազաճեմ գնացքովը  
Սիրտս քաշեց իրան մոտ, խելքս առավ գլխիցս,  
սեց մին որ կատանաս նեղությունիդ փոխարա:

Քսան յերկու տարումն եմ, քսանը շուտ անց կացավ,  
Ես յերկուսը հենց դիտեմ, յերկու հարրից ավելցավ.  
Սև մազերիս մի խարվեք, սե սրտիս մտիկ արեք,  
Սոսի դարգն ես դու, աղջիկ, ինձ մի դեղ ու ճար արա:

Սվ. 162.

ԱՐԻ՛, ԱՐԻ՛ ԿԱՉԱԳԱԿ . . .

Արի՛, արի՛, կաչաղակ, բարով յեկար ինձ համար,  
Վարդիթերենց տանիցը բեր նոր խաբար ինձ համար.  
Քեզ համար միս կրերեմ, կեր կշտացիր, ման արի.  
Վարդիթերիս ասա թե, դու տես մի ճար ինձ համար:

Ասա թե քու լեղճ Սոսը, ձեռը ծոցին ման գալով  
Դաշտեր, չուեր չափում ա, սիրույդ համար ջան տալով.  
Մեռնիմ ազիդ արևիդ, քանի ձենդ լսել եմ,  
Քաղցր լեզուդ դառել ա մի սուր նշտար ինձ համար.

Են գիշերը ինձ համար, դու նոր արև ծագեցիր,  
Վոսկեփայլ ճառագայթդ սրտիս մեջը թափեցիր.  
Վերջացավ իմ կարծիքս, սիրույդ կապը պնդացավ,  
Թող մահը դա որես յետ աղատարար ինձ համար:

Հալաղարից կարմիր ես՝ մախմուր ծաղկի խավ ունիս,  
Անմահական ջրի պես մի դուս գալու թավ ունիս.  
Քու թավը յես լավ տարա, սրտիդ սիրեկան դառա,  
Քեզ մոտ դուդ ա ըստուց յե տ՝ թե ձոր թե սար ինձ  
համար:

Դե թո՛ի դնա, կաչաղակ, Վարդիթերենց կտուրը,  
Սիրեկանիս իմաց տուր ես սիրտ կրակող լուրը,  
Պատմիր թե Սոսն ասում եր, են եր իմ բախտի որը.  
Վոր քու կարմիր թշերդ ելան շաքար ինձ համար:  
Սվ. 53—54.

Ս ո ս ր

Բան եմ ասում, ականջ դիր, անկաջիդ մատաղ, Վարդիթեր,

Ինձ մի քցիլ չոլերը, կրակիլ սաղ-սաղ, Վարդիթեր,  
Հանգիստ ու դադար չունիմ դառել եմ սարսաղ Վարդիթեր  
Աստված սիրես խնայի, թող մնամ խաղաղ Վարդիթեր:

Գ ա ռ ե գ ի ն ր

Հբամայի, վոր լսեմ, դու ինձ համար վարդ, Սոսի ջան,  
Պատրաստ եմ յես կատարել ամեն հրամանդ, Սոսի ջան,  
Թեկուզ սաղ աշխարհքն ինձ ասի վատարաղդ, Սոսի ջան,  
Չեմ թողալ քու սրտուձդ մի կորկի չափ դադ, Սոսի ջան:

Ս ո ս ր

Ազջի, յերբ վոր քեզ տեսա, թուով յերեսիս գուշնը,  
Թե արհդ կսիրես, մի կտրիլ իմ անուշ քունը.

Տված խոսքդ պինդ պահիր, վոր հաստատվի սրտիս  
սյունը,

Սերիդ կապը նորոգի, իմ վոսկի վարաղ Վարդիթեր:

Գ ա ռ ե գ ի ն ր

Ինձ պես հասարակ ազջիկը, վոր հող եմ քո վոտի տակին,  
Ի՞նչպես կարամ քունդ կտրիլ, վոր դերի յեմ քու պատ-  
կերքին.

Իր խոսքիցը յես դառնողն արժանի ա թեժ կրակին,  
Սերիդ կրակը նոր ա ու նոր, երված սրտիս շաղ Սոսի ջան:

Ուզում եմ քեզ մեկ-գովիլ, վախում եմ, եդ իմ բանը չի,  
Թե արեգակ կասեմ, կասեն նրա նմանը չի.

Արեգակը աչք ծակող ե, եդ սրա նշանը չի,  
Բաս լուսնակ ես կես ամսվա, իմ լիս ու շավաղ  
Վաղիթեր:

Գ ա ռ ե գ ի ն ր

Գովասանքը դարդակ բան ե, սերն ամենիցն ե գովելի,  
Արեգակ, լուսնիակ ասելով՝ վռչինչ ոգուտ չի դուս դալի.  
Թե գովելու ջանն ես ուզում, քեզ պես ել վժր մինը կըլի,  
Համ քաղցրածայն, համ պարզասիրտ, համ կտրիչ  
դոչաղ, Սոսի ջան:

Ս ո ս ր

Լուսնիակն ել կըխավարի, դու միշտ պայծառ ես հողի ջան  
Յաղուտ, ալմաստն ել կը փչվին, քյար չի անիլ քեզ վո-  
չինչ բան.

Վարդն ել կթոտմի, ամեն ծաղիկ կըսալարին,  
Բայց իմ սրտին անթառամ ես, իմ բաղչա ու բաղ  
Վարդիթեր:

Գ ա ռ ե գ ի ն ր

Աշխարհիս ամեն բանը մին ուր մի վախճան կունենա,  
Մին լավություն, մին հալալ սերն ե, վոր հավիտյան  
կըմնա,

Յես ել շուտով կը վերջանամ, թե մուրազս կիսատ մնա,  
Մուրազս կիսատ թողողը շուտ մտնի դադաղ, Սոսի ջան:

Ս ո ս ր

Սոսն եմ, սիրովդ տողորված, սաղ քշերը անքուն  
եմ մնում,

Վայրենու պես տուն չեմ տեսնում, հեր ու քարափ  
ինձ բան չինում.

Ով յերկուսիս վայիս դառնա, հախ ասանից եմ խնդրում,  
Մուրազաչոր սրտով մեռնի, ամեն ասա, ան Վարդիթեր:

Գ ա ռ ե գ ի ն ք

Սիրույդ տեղակ սեր եմ տվել, ել ինձանում հալ  
չի մնաց,

Դու վայրենի՝ յես ճիւղքի տեր, մեզ ուրախանալ չի  
մնաց.

Չան Չանի տալսց սավահի՝ վոչինչ բան հուսալ չի  
մնաց,

Վարդիթերի հույսն ե աստված, մեկից չունի վախ,  
Սոսի Չան:

ՍՎ. 130 - 131.

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

## Ա

Աբասի — 20 կողեկանոց

Ալա — ալ

Ալվալա — ալ, կաս կարմիր

Ախարախա (կանգնել) — հպարտ կեցվածքով

Ախպեր — յեղբայր

Ակնամոմ — ընտիր տեսակի մոմ

Աղլուխ — թաշկինակ

Այդը — չամորձատված վորձ ձի

Անարխա — անոգնական

Աշկարա — ակնհայտ

Աչքածակ — ագահ, անկուշտ

Աչքել — նայել, դիտել

Աջու — աջակողմյան, աջ

Արին — արյուն

Արոտի թողնել — արածացնել

## Բ

Բալա — պատիժ, դժբախտություն. մանկիկ

Բաղմանչի — այդեպան

Բաշ — գմբեթածե կտուր

Բարեմբարանալ — հավասարվել, հավասարակշռվել

Բհամ դալ — լերեան դալ, առաջանալ

Բոշա — գնչու

## Գ

Գել — գայլ

Գիր անել — գյու թել, կախարդել

Գլխով պտիտ դալ — փայփայնել, սիրել

Փյաճկիր—հետամնաց

Փյորա—համեմատ

Փյուլբանդ—ծաղկեփունջ

Պ

Պաղ—խարան

Պաղած—խարանած

Պաստա—փունջ. կույտ. խումբ

Պատեւ—աշխատեւ, բանեւ

Պատում—վաստակ, արդյունք

Պարման—հարդ

Պղվել—ուղղվել. հարմարվել. հարթվել

Պիհ—կողմ

Պոշ—կուրծք

Պուշման—ախոյան, թշնամի

Պ

Ջալում—չար, կատաղի

Ջիզի—տան ավագ հարսը (աղի)

Ս

Սշխ—յեռանդ, տրամադրություն

Սրծաթ—արծաթ

Ր

Րլնեւ—լինեւ

Րնչանք—մինչև

Ր

Րագ կենալ—թագնվել

Րագա—նոր

Րագի—վորսկան շուն, բարակ

Րալաք—թակարդ

Րառլան—բաղե

Րավազա անեւ—հրամցնեւ, պատվել

Քալ—ծառի կանաչ տերև

Քեր—թերթ. վարդի թեր

Քի—թիակ

Քիքա—պատառ, կտոր

Քոռ—ցանց, վորոզայթ. հարդի քթոց. աման

Քուման—10 ուրլի

Փ

Փուռ—չհասած խաղող. խակ միրդ

Ի

Իշտան—ախորժակ

Լ

Լալազար—կակաչ. կարմիր, գեղեցիկ ծաղիկ

Լակլակ—արագիլ

Լիս—լույս

Խ

Խարար—լուր, տեղեկություն

Խաթա—փորձանք, պատահար

Խաթը—պատիվ, հարգանք

Խառա—ծիրանադույն

Խառատ—հյուն

Խավ—կտորի (թավիշ կայն) յերեսի նուրբ շերտ

Խարար—անպետք, փչացած

Խեր—ոգուտ

Խի—լինչու

Խյուր—հյուր

Խթել—լափել

Կ

Կամ դալ—համաձայնեւ, խոսք տալ

Կաննեւ—կանդնեւ

Կունդիկ-կունդիկ — թավալդլոր  
Կուն — թև. կողմ  
Կսնեկ — ձեռքով հենվել, թիկն առալ

Հ

Հաղաթ — սպառնալիք  
Հալիվորել — ձերանալ  
Հախ — իրավունք, վարձք  
Հավես — արամադրություն  
Հարակաշ — տոկուն, դիմացկուն  
Հեր — քարայր  
Հերու — անցած տարի  
Հիլ անել — հմայել, դյուլթել  
Հորսլի — փայտե գործիք, վորով քամուն են  
տալիս դարմանը  
Հունար — շնորք, հնարհք. ընդունակություն

Ձ

Ձախու — ձախ, ձախակողմյան

Ղ

Ղաղ — սագ  
Ղաղար — փորձանք  
Ղաթար — շարք  
Ղալամ — գրիչ  
Ղալամքաշ — գրչով գծված, նկարված  
Ղանդ — գլուխ շաքար  
Ղլման — նման, պես  
Ղոնաղ — հյուր  
Ղոչ — խոյ  
Ղոչաղ — քաջ, արի  
Ղորթ — ճշմարիտ. իրական

Ղուլ — ծառա. սարուկ-հլու  
Ղում — ավազ  
Ղույ — աղվամազ. չար բոթ, գույթ  
Ղուրբան — մատաղ  
Ղրաղ — ափ, յեզր  
Ղամաթ — ակնկալություն, բախտ  
Ղրկել — ուղարկել, հղել

Ճ

Ճար — հնարավորություն. կարողություն, ոգ-  
նություն  
Ճլերք — հիվանդություն. բարակացավ

Մ

Մալ — ունեցվածք, հարստություն, կայք, գույք  
Մախմուր — թավիշ  
Մահենիք — թաղում, մահվան ծիսակատարություն  
Մատակ — եգ գոմեշ  
Մարալ — յեղնիկ (վորձ)  
Մարանդի — մանգաղ  
Մեյդան — հրապարակ  
Մեր մտնել — մայր մտնել  
Մինթանա — շրջագրեստ (հնաձև)  
Մհանա — պատրվակ  
Մով — կապույտ  
Մուղարար — միալար, շարունակ

Յ

Յախա — ոձիք  
Յաղութ — հակիկնթ  
Յար — սիրած  
Յարար — արդյոք



## Ն

Նալ — պայտ  
 Նալլաթ — անեծք  
 Նախշուռ — նախշած, ծաղկուն  
 Նանիկ — որոր  
 Նարդիվան — սանդուխք  
 Նի ընեկ — բարձրանալ, վեր յեկեկ  
 Նհախ — անտեղի

## Շ

Շահի — հինգ կոպեկանոց  
 Շաշ — հիմար  
 Շավաղի — արշալույս, լուսաբաց  
 Շարձաղ — գեղատեսիլ, ցորենի մաղի տեսակ  
 Շիլա շապիկ — կտավե կարմիր շապիկ  
 Շիշաք — ծաղիկ  
 Շհանց տալ — ցույց տալ  
 Շուշա — ապակի

## Չ

Չալ — խատուտիկ  
 Չախմախի — կայծաքար  
 Չայիր — չիման — մարգագետին. արոտատեղի  
 Չանա — ընչացք  
 Չավ լինեկ — հոչակվեկ, տարածվեկ  
 Չարդախ անեկ — տարածեկ, ցցեկ (պողերը, վոտները)  
 Չոլ — անձարդաբնակ դաշտ, հարթավայր  
 Չոլմաղ — անշնորհք, անպետք. անինչք  
 Չոռ — ցավ — հիվանդութուն  
 Չուխա — տղամարդու հնածե հագուստ  
 Չվան — թռի, պարան

## Պ

Պաս — ծոմ  
 Պոպոք — ընկույզ  
 Պուտուտուրիկ — խատուտիկ  
 Պոռշ — շրթունք

## Ջ

Ջան — մարմին  
 Ջառմա — տուգանք  
 Ջեր — զրպան  
 Ջիդյար — թոք  
 Ջիվան — ջահել, յերիտասարդ  
 Ջուխտ — զույգ  
 Ջուղար — պատասխան. լուր  
 Ջվալ — մեծ տոպրակ

## Բ

Բադի — համաձայն  
 Բահաթ — ժողովուրդ, հասարակութուն. հպատակ

## Ս

Սաղ — կենդանի  
 Սավահի — բացի  
 Սարսաղ — հիմար  
 Սարարի ընեկ — խելահորույս լինեկ, ցնդեկ  
 Սել — սայլ. հեղեղ  
 Սհարդանտ — գավառական, գյուղական պաշտոն-  
 յաների առանձնատեսչակը  
 Սհաթ — ժամ. ժամացույց  
 Սղալեկ — կոկեկ  
 Սորոր տալ — քայլել սահելով

Վ

Վաղի—վաղուցվա, հին  
Վայիս—վոսոխ  
Վելել—վայելել  
Վեր հատել—ծեծել, գլխին տալ

Տ

Տանց—դրանց  
Տատաշ—տատասկ

Փ

Փախս աննել—փախչել, խույս տալ  
Փարա—փարա—կտոր—կտոր  
Փարվաղ անել—շորորալ. սավառնել  
Փեշաքյար—արհեստավոր  
Փեշքաշ—նվեր, ընծա  
Փոթթեղ—այրել, խանձել  
Փոլատ—պողպատ  
Փոթ հաց—նահապետական գյուղում դրացիներին  
մեջ յեղած հաց փոխ տալու սովորություն  
Փչվել—ի չիք դառնալ, փչանալ, վռնչանալ,  
ուռչել

Ք

Քամակ—գավակ, կոնակ, թիկունք  
Քամար—գոտի  
Քաշալ—ճաղատ  
Քարգահ անել—քառանկյունի դադգյահի վրա  
ձեռագործ անել, գործել  
Քաքուլ—մազերի ֆունջ ձակատի վրա  
Քթել—զղալ  
Քոմմա—բուրբ, վողջ

ՀԱՄԱՌՈՏՈՒՅՅՈՒՆՆԵՐ



- Աք—Աքցիզչի (պատկեր), Թիֆլիս, 1896 թ.  
 Բ—Բղդե, Թիֆլիս, 1890 թ.  
 ԿԾ—Կովածաղիկ (2-րդ տպագրութուն,) Տփլիս,  
 1897 թ.  
 ՀԽ—Հացի խնդիր (2-րդ տպագրութուն),  
 Տփլիս, 1904 թ.  
 Հն—Հունո, Թիֆլիս, 1900 թ.  
 Հշ—Հուշիկներ, Ա. շրջան, Թիֆլիս, 1894 թ.  
 ՄԽ—Մեր Խեչոն (ղրույց), Թիֆլիս, 1899 թ.  
 ՄԱ.—Միքել Աղենց Արդյուլը (իրական կյանքից)  
 Թիֆլիս, 1896 թ.  
 Ն—Նա (պատկեր), Թիֆլիս, 1896 թ.  
 Շն—Շահեն, Թիֆլիս, 1883 թ.  
 ՍՀ—Սոխակ Հայաստանի, Ա. Գրիգորյանց, հատ.  
 3-րդ, Բագու, 1876 թ.  
 ՍՎ.—Սոս և Վարդիթեր (2-րդ տպագրութուն),  
 Թիֆլիս, 1887 թ.  
 Յ—Յեցեր, Թիֆլիս, 1889 թ.

## ԲԱԺԻՆՆԵՐԻ ՑՄՆԿ

	ԵԶ
1. ԱՌԱՋԱԲԱՆ . . . . .	3
2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ . . . . .	5
3. ԲՆԱԳՆԵՐ	
ա. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ . . . . .	31
բ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՇՆԵՐ	
ՅԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ . . . . .	41
գ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶՐՈՒՑՆԵՐ	
ՅԵՎ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . .	59
դ. ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՎ	
ԱՇՈՒՂԱԿԱՆ ՅԵՐԳԵՐԻ . . . . .	69
4. ԲԱՌԱՐԱՆ . . . . .	81
5. ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . .	91



ԳԻՆԸ 1 Ռ. 50 Կ.

ПРОШЬЯН  
И  
НАРОДНОЕ  
ТВОРЧЕСТВО

Изд. Института Истории и Литературы  
Армянской ССР.  
Ереван — 1938 г.

« Ազգային գրադարան



NL0355039

70.841